№ 107 ՈՒՐԲԱԹ ՄԱՅԻՍԻ 22

1909

ԵՐԵՍՈՒՆԵՕԹԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՈՒՐԲԱԹ ՄԱՅԻՍԻ 22 № 107

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլի. կէս տարվանը 6 ռուբլի.
Առանձին համարները ԱՄԵՆ ՏԵՂ 5 ԿՈՊ.

Թիֆլիսում գրվում են խմբագրութեան մէջ.
Մեր հասցէն՝ Тифлисъ, редакція «Мшакъ» Базарная ул. д. Тамамшева № 16.
Կամ Tiflis, Rédaction «Mschak».
ՏԷԼԷՖՈՆ № 253.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 (բացի կիրակի և տօն օրերից).

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով

Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 10 կոպէկ.

ՏԷԼԷՖՈՆ № 253.

ՄՇԱԿ
(37-ՐԴ ՏԱՐԻ)

Հասցէն՝ ТИФЛИСЪ, Редакція «МШАКЪ».
TIFLIS, Rédaction du journal «MSCHAK».

12 ամս. 10 ռուբ., 11 ամս. 10 ռ., 10 ամս. 9 ռ., 9 ամս. 8 ռ., 7 և 6 ամս. 6 ռ., 5 ամս. 5 ռ., 4 ամս. 4 ռ., 3 ամս. 3 ռ., 2 ամս. 2 ռ., 1 ամս. 80 կ. և առաքման ծախք՝ 20 կ.: Ամերիկա տարեկան 6 դոլար, Եւրոպա 30 ֆրանկ, Պարսկաստան 10 ռուբլի, Թուրքիա 120 ղրուշ: Հասցէն փոխելու համար պէտք է ուղարկել նաև հին հասցէն և 40 կ. նամակագրոշմ:

Կովկասից դուրս գտնվող անձերի և հիմնարկութիւնների յայտարարութիւնները բացառապէս ընդունվում են՝ Մոսկվայում—Центральная Контора Объявленій Торгов. Дома Л. и Э. Метшль и К-о, Мясницкая, д. Сытова, և նրա բաժանմունքներում—Պետերբուրգում՝ Морская, 11, Վարշավայում՝ Маршалковская, 130, Պարիզում՝ 8 Площадь Биржи.

Առևտրի և արդիւնաբեր. մինիստրութեան իրաւասութեան ներքոյ գտնվող

Տ. Մ. ՓԻԼՈՅԵԱՆԻ
ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԳԻՏԵԼԻՔՆԵՐԻ ԿՈՒՐՍԵՐԸ

յանձնարարում են առևտրական հիմնարկութիւններին հաշուապահներ, նրանց օգնականներ, գանձապահներ և ուրիշ առևտրական ծառայողներ, որոնք ատարել են կուրսերը և աչքի են ընկնում իրանց գովելի մասնագիտութեամբ և անաղարտ վարքով: Դիմել կուրսերի հիմնադրին՝ առևտր. գիտութ. կանդիդատ Տ. Փիլոյեանին, Թիֆլիս, Միխայլովսկի պրոսպեկտ № 24|4.

(ու. 4.) առ. 465. 2—1

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏՈՒՆ
ԶՈՒԲԱԼՕՎԻ ԱՆՈՒԱՆ
Ժողովրդ. ներկայացումների կազմակերպ.
Հայկական սեկցիան
Շաբաթ, մայիսի 23-ին
Կը ներկայացնէ
I
Առաջին անգամ նոր պիէս, հայ գիւղական կեանքից, Յովհ. Թումանեանի պօէմայից՝
Ա ն ո ւ Շ
Պիէս 1 գործ., փոխադրութ. Գ. Երիցեանի
Երգեցիկ խումբ—դեկավարութեամբ պ. Մ. Միրզոյեանի, գիւղական պարեր, Ջան-գիւլում, և այլն:
II
Մ Ա Ր Ի Ա Տ Տ Ա
Կօմ. 1 գործ., թարգմ. Գ. Զուբարի
III
Մ Ի Հ Ր Պ Ր Ի Զ
Վօդ. 1 գործ., հեղ. Պ. Արաքսեանի
Ռեժիսէօր՝ Պ. Ա Ր Ա Ք Ս Ե Ա Ն
Սկիզբն է ճիշդ 8½ ժամին երեկոյեան
Տեղերի գները 50 կ. մինչև 5 կ.:
(ու. շ.) (առ.) 468 2—1

ԲԺՇԿԱՊԵՏ
Գ. ԹԱԴԷՈՍԵԱՆ
Մայիսի 20-ից ընդունում է հիւանդներ Կովկասեան հանքային ջրերում:
Հասցէն՝ ԷՍՍԷՆՏՈՒԿԻ, Վերխնիյա Կուրսովայա փողոց, տ. Վվեդենսկու: Эссентуки, Верхняя Курсовая ул., дача Введенской.
(և. հ. կ.) (ա.) 433. 10—4

ԲԺԻՇԿ
Ա. ՄԽԻԹԱՐԵԱՆ
մեկնեց Կովկասի հանքային ջրերը:
Հասցէն՝ Կիսլովոդսկ, հիւրանոց «Ռոսսիա»:
(ա. օ.) (առ.) 464. 3—3

ԹԻՖԼԻՍԻ
ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
երթևեկ հիւանդների համար ամեն օր, Վօկզալնայա 8, տ. Էնֆիաճանցի:
Տելեֆոն 695
Ե. Գ. ՖԵԴՕՐՈՎ ամեն օր, բացի չորեքշաբթի և կիրակի օրերից, 8½-ից մինչև 9½, ներքին հիւանդ.:
Վ. .Դ ԳԱՄԲԱՇԻՉԷ ամեն օր, բացի կիրակի օրերից, 11—12 ժամը, ներքին և երեխաների:
Բ. Ա. ՊՕՊՕՎԵԱՆ երկուշաբթի, չորեքշաբթի, հինգշաբթի և շաբաթ 12—1 ժամը, կոկորդի քթի և ականջի:
Գ. Մ. ՄԱԿԱՐԵԱՆ երեք. և ուրբաթ օրերը 12—1 ժ., ներքին:
Ա. Ն. ԴԻԱՍԱՄԻԶԷ ամեն օր, 11½-ից մինչև 12½ ժ., սիֆիլիս և կաշուէ հիւանդութիւններ:
Ն. Մ. ՄԵԼԻՔՕՎ ամեն օր, խիրուրգիական և կանանց հ. 1—2 ժամը:
Ի. Դ. ԳՕՄԱՐԹԷԼԻ ամեն օր, ներքին և երեխաների, 2—3 ժամը:
Բ. Ս. ՄՈՒՍԽԷԼՕՎ ամեն օր, բացի կիրակի օրերից, 2—2½ ժ., աչքի հիւանդ.:
Ե Ր Ե Կ Ո Ն Ե Ր Ը
Ա. Գ. ՄԻՐԶՕՅԵԱՆ ամեն օր, բացի կիրակի օրերից, 6—7 ժ., ներքին և երեխաների:
Ն. Գ. ԶԻԶԻՆԱԶԷ ամեն օր, բացի կիրակի օրերից, 6—7 ժ., ներքին և երեխաների:
Հիւանդանոցում կատարվում են միկրոսկոպական, բակտերիոլոգիական և քիմիական հետազօտութիւններ, նոյնպէս ծաղիկի պատուաստում և ծծմայրերի քննութիւն: Վճար խորհրդի համար 50 կոպէկ:
(օ. մ.) ա. 38. 100—41

ԲԺՇԿԱՊԵՏ
Ա. ՔԱԹԱՆԵԱՆ
Մայիսի 15-ից ընդունում է հիւանդներ Կովկասեան հանքային ջրերում:
ՊԵԱՏԻԳՕՐՍԿ, Վերխնի Բուլվար, տ. Գիրէի, № 14. Пятигорскъ, Верхній Бульваръ № 14, д. Гирей.
(օ. մ.) (10 ա.) (10 վ.) 434. 20—4

ՆԵՐԿԱՅ ՊԱՏՄԱՆՆԵՐՈՒՄ

Մենք ասացինք, որ Թուրքիայի սըխալները կարող են ճակատագրական նշանակութիւն ունենալ նրա համար և վտանգել նրա գոյութիւնը:

Արդարև եթէ Թուրքիան անկարող լինի պահել կարգը երկրի մէջ և անընդունակ լինի իրագործելու բարենորոգութիւնների ծրագիրները, նա կը կորցնի իր բարոյական հեղինակութիւնը ոչ միայն իր ժողովրդի մէջ, այլ և եւրոպական պետութիւնների առաջ և դուռ կը բանայ կողմնակի ազդեցութիւնների ու միջամտութիւնների համար:

Այո, այդպիսի բացասական ելք կարող է տեղի ունենալ:

Բայց միևնոյն ժամանակ անհրաժեշտ է աչքի առաջ ունենալ այն էական հանգամանքը, որ եւրոպական պետութիւնները չափազանց բծախնդիր են դէպի այն ամեն երևոյթները, որոնք կարող են աւելացնել պետութիւններից որևէ մէկի ազդեցութիւնը ի վնաս միւսների:

Եւ շնորհիւ պետութիւնների փոխադարձ անվստահութեան և դիւրազգաց մրցակցութեան՝ Թուրքիային աջողվում է մի այնպիսի դիրք պահպանել, որը մի ուրիշ պետութեան վիճակվում է, երբ նա կատարելապէս ինքնուրոյն, զօրաւոր պետութիւն է՝ մեծ իր ներքին կուլտուրական բովանդակութեամբ և պատկառելի իր ֆիզիքական ոյժով:

Թուրքիան, ճիշդ է, կարող է բաժանման վտանգի մէջ լինել, բայց նա այսօր դեռ չէ բաժանվում: Թուրքիան կարող է ենթարկվել միջամտութեան, բայց այսօր այդ միջամտութիւնը դեռ չէ սպասվում ոչ օրի կողմից: Թուրքիան կարող է անիշխանութեան սարսափելի քաօսի մէջ գալարվել. բայց այսօր նա դեռ երիտասարդ-Թուրքերի հեղինակութեամբ պահպանվող կանոնաւոր իշխանութեան բազուկի տակ է քարշ տալիս իր թէև ոչ գոհացուցիչ և բեղմնաւոր, բայց դեռ ևս տանելի կեանքը:

Կարելիութիւնը մի հանգամանք է, իրականութիւնը մի ուրիշ:

Եթէ մի կողմից կարելիութիւնը դրդում է մարդկանց նախաձեռնութիւններով զբաղվել և նախազգուշական միջոցների մասին խորհրդածել, միւս կողմից աւելի ևս արամաբանական է, որ իրականութեան երևոյթների ոյժը և դերը չը վրիպեն մարդկանց տեսութիւնից և ուշադրութիւնից: Զը պէտք է մոռանալ, որ Թուրքիան դեռ ևս ինքնուրոյն պետութիւն է, որ ինքն է կարգադրում և ղեկավարում իր ներքին վարչական կեանքը: Եւ եթէ նա կարողանայ գիմանալ բոլոր փորձութիւններին և յաղթանակով դուրս ելնել ներկայ անցողական շրջանից, կարող կը լինի դեռ երկար ազատ մնալ կազմալուծման վտանգից: Ցաւենայն դէպս՝ նա այսօր իրական ոյժ է, որը իր իշխանութեան սահմաններում գործում է ինքնուրոյն կերպով:

Հայ ժողովուրդը, որ ապրում է այդ պետութեան զանազան մասերում, պէտք է կարողանայ հեղինակութիւն և վստահութիւն ձեռք բերել, որ նա անպայման օգտակար և կուլտուրական մի տարր է, որի համար խաղաղ, շինարար քաղաքացիական կեանքը անհրաժեշտ է, իբրև հիմնական յենակէտ և պատուանդան բեղմնաւոր գործունէութեան համար:

Զախողակի և չար պատմական հանգամանքները քայքայել են Թուրքահայաստանում ապրող ժողովուրդների կեանքը և սերմանել են նրանց մէջ խորթութիւն և թշնամութիւն: Թուրքական և առհասարակ մահմեդական խաւերում տարածվել է այն սխալ գաղափարը՝ թէ հայ տարրը ունի բացառիկ, եղակի ու անջատական ձգտումներ և թէ նա ատելութեամբ է վերաբերվում դէպի հարևան ազգութիւնները և կրօնական համայնքները: Այո, Հին-Թուրքիան պատուաստեց այդպիսի վնասակար հասկացողութիւններ մահմեդական մասսաների մէջ և վարակեց մարդկանց ուղեղները զազրելի տրամադրութիւններով:

Իսկ հայը պէտք է իրապէս ապրի այն միջավայրում, ուր չարամիտ դիւական ոյժը այդքան դժոխային պայմաններ է ստեղծել նրա խաղաղ կենցաղավարութեան դէմ:

Այս բոլորը, սակայն, մի բան է մեզ ցոյց տալիս, որ Թուրքահայ ինտելիգենցիայի առաջ մեծ և ծանրակշիռ խնդիր է դրված՝ մաքրել դէպի համերաշխութիւն տանող ճանապարհները ապառաժներից ու փշերից և բեղմնաւոր կուլտուրական գործունէութեան հաստատ ծրագիրներով ձեռք բերել հեղինակաւոր վստահութիւն այն ազդութիւնների և ազդեցիկ համախմբումների կողմից, որոնց շրջանում հայը ապրում է:

Ա. Քալանթար

ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ ՀՐԱՒԻՐԱԿՆԵՐԸ Կ. ՊՕԼՍՈՒՄ

Կ. Պոլիս, 13 մայիսի

Առաւօտեան կանուխ, գերմանական «Ստամբուլ» շոգենաւով մայրաքաղաքս հասան կաթ. պատուիրակ ս. հայրերը:

Պատրիարքարանի կողմէ, բարի գալուստ մաղթելու համար, շոգենաւ փութացած էին եկեղեցական ու աշխարհական ազգայիններ: Ռուսական դեսպանատունը ղրկած էր իր կառքը:

Քիչ յետոյ, պատրաստ կառքերով, պատուիրակութիւնը առաջնորդուեցաւ Պերա, ազգ. հիւրանոցը, Սպանդիդ, որ ամբողջապէս տրամադրուած է մեր յարգելի հիւրերուն:

Թէև յոգնած են ու թերևս քիչ մըն ալ քնատ, բայց ինչ ընել. այցելուներ կը հասնին իրար ետև, աշխարհական ու հոգևորական. ծանօթներ կան, կան նոյնպէս հետաքրքիր ազգայիններ:

Իսկ ես, իրիկնադէմ, կերթամ համբուրուելու իմ ծանօթ վարդապետներու հետ ու առիթ կը գտնեմ երկար բարակ խօսելու և լսելու: Անոնք իրենց ունեցածներէն կը խօսին, մենք մեր ցաւերէն կը խօսինք:

Ա՜խ, այդ ցաւերը... վրայ կը հասնին ամեն բոպէի մէջ անթերևս հիւրերու պէս, կը գրաւեն մեր ամեն ժամերը ու կը տխրեցնեն այն ատենն իսկ, երբ գոնէ առհարկի ուրախ ըլլալ պէտք էր. ու կը տխրեցնեմ մեր հիւրերն ալ, արդէն ցաւած իրենք ալ մեզի պէս ու մեզի հետ:

Ս. Հայրապետը ինքն ալ պիտի գայ հիւրանոց ու պիտի մնայ այդտեղ մինչև իր հրաժեշտի օրը: Պերա դիւրութիւններ կընծայէ թէ այցելուներ ընդունելու և թէ, միևնոյն ատեն, այցելութիւններ տալու: Այդ դիտաւորութիւնով՝ Երուսաղէմատունէն աւելի նախապատիւ համարուեցաւ Սպանդիդ հիւրանոցը տրամադրելու պատուիրակութեան:

Հաւանաբար չորս-հինգ օրէն Ս. Հայրապետը ճամբայ կելլէ դէպի Պետերբուրգ, ուր, ինչպէս գիտէք, հրաւիրուած է Վեհ. Ցարին կողմէ:

Տեղական բոլոր թերթերուն մէջ օրը օրին լուրեր կը հրատարակուին Ս. Հայրապետին բոլորտիքը: Գերման գործակալներ, իրենց գիտցածին պէս, լուրեր կը հնարեն ու կը գրեն իրենց թերթերուն: Անոնցմէ մին, իր ուզած ձևովը մեկնելով Կաթողիկոսին ու պ. Զինովիեվի տեսակցութիւնը, կը գրէ, թէ հայոց Կաթողիկոսը դիմում պիտի ընէ Վեհ. Ցարին՝ հայերու կոտորածին ու քիւրդերէ եղած ժանուան սպառնալիքներու մասին՝ Թագաւոր Կայսր գթութիւնը հայցելու: Ուրիշ մը գրած է, թէ Թիւրքիոյ հայերու կողմէ գրաւոր դիմում եղած է Դուսայի հայ անդամին՝ ռուս կառավարութեան հովանաւորութիւնը խնդրելու: Այս ու այս կարգի խօսքեր:

«Թայմսի» գրածին պէս, գերմանները, բռնապետութեան շրջանի ատեն, կրթնելով Համիդին՝ երկիրը քանդեցին, հիմա ալ, Հիլմի փաշ՝ն գործիք ունենալով, կը ջանան նախկին դերերը խաղալ՝ երկիրը վերջովելու սահմանադրական շրջանի ատեն:

Ատով չենք ուզեր ըսել, թէ մենք խաղաղ ենք, ապահով գրութեան մէջ, այլ թէ լուրերը բոլորովին շինծու են: Իսկ ինչ որ հաստատ է, սա է որ հիմա երկրին մէջ հայերու վիճակը հասած է այնպիսի անբնակայելի զարհուրանքի, որ անշուշտ ամեն հայասատանցի հայ երկնքէն իջած հրեշտակի պէս պիտի ողջունէր քրիստոնեայ զինուորի մը տեսքը իր գլխուն վերև: Մի մեղադրէք խեղճերը. ալ մարդկային վիճակ չէ որու դատապարտուած է հայ քրիստոնեայ տարրը:

Գերմանական այդ լուրերը բաւական վրդովիչ եղան կեդրոնական կառավարութեան մէջ: Վարչապետը հեռախօսով իր մօտ հրաւիրած է Ստեփան Գարայեան՝ մեր քաղաքական ժողովի ատենապետը՝ անկէ տեղեկանալու համար թէ ինչու Կաթողիկոսը հրաւիրուած է Ցարէն: Դատական գործերու մինիստրն ալ իր մօտ կոչած է տեղապահը՝ նոյն նպատակի համար:

Գերման թերթերու դիտաւորութիւնն ալ ճիշդ սա է. վրդովել, պղտորել միտքերը, շփոթը շարժել, կասկածներ գրգռել Թիւրքական խուժանի մէջ, ու նոր վախեր, նոր շփոթութիւններ առաջ բերել դուցէ:

Շահէն

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Կ. Պոլիս, 20 մայիսի

Երէկ մի պատգամաւորութիւն մեկնեց մեծ պետութիւններին Մուհամմէդ V-ի գահակալութեան մասին իրազեկ անելու համար: (Հ. Գ.)

—

Կ. Պոլիս, 20 մայիսի

Եկաւ Եգիպտոսի խրդիվը: Հանդիսաւոր ընդունելութիւնից յետոյ նա անմիջապէս այցելեց սուլթանին:

(Հ. Գ.)

—

Բերլին, 20 մայիսի

Վօլֆի տեղեկութիւններին նայած, Վիլհէլմ կայսրը Թագաւոր Կայսրի հրաւէրով մտադիր է յունիսի սկիզբներին գնալ Բալտիկ ծովի հիւսիսային մասը Նորին Կայսերական Մեծութեան հետ տեսնվելու համար: (Հ. Գ.)

—

Պետերբուրգ.—Կովկասում տեղի ունեցող խուզարկութիւնների առիթով Պետական Դուսայի անդամ Սաղաթելեանը ունկնդրութիւն էր խնդրել մինիստրների նախագահ Ստոլիպինից: Մայիսի 16-ին Սաղաթելեանը ներկայանալով Ստոլիպինին երկարատև խօսակցութիւն է ունեցել նրա հետ:

Թոյլատրված է Կախեթի երկաթուղային գծի կառուցումը: Աշխատանքները կը ըսկվեն 1910 թի գարնանից:

Լուր է պատում, որ մայիսի վերջերին սինոդի օրեր-պրոկուրոր Լուկեանովը թողնում է պաշտօնը: («Б.»)

—

Արտաքին գործերի մինիստրութեան մօտիկ շրջաններում լուր է տարածվել, որ Կրետէ կղզուն հովանաւորող պետութիւններից մէկը մտադիր է առաջարկել Կրետէն դարձնելու վասսալական պետութիւն՝ Թուրքիայի հովանաւորութեան ներքոյ: Պետերբուրգի շրջաններում կարծում են, որ այդ նախագիծը աջողութիւն կունենայ: («Б.»)

ԱՐՁԱԳԱՆՔՆԵՐ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻՑ

Թաւրիզ, 16 մայիսի

Երէկ ձերբալվեց մի ռուսահպատակ հայ և ուղարկվեց բանակ. յիշալի տունը խուզարկվեց, բայց կասկածելի ոչինչ չը գտնվեց:

Քաղաքիս Հօքվարաղ արուարձանում գտնվող մի խմբապետ զէնքերը վայր չը դնելու պատճառով՝ ռուսները ստիպված եղան միջամտել, որովհետև քաղաքապետ Իջլալ-ուլ-Մուլքը իր անկարողութիւնն էր յայտնել: Այսօր առաւօտեան շուտով երկու հարիւր ռուս զինուորներ մտան Հօքմարաղ թաղը և շրջապատեցին վերոյիշեալ խմբապետ Իւսուֆի ամրութիւններն ու տունը: Վերջինս, տեսնելով իր ընդդիմութեան անօգուտ լինելը, անձնատուր եղաւ իր 12 ընկերներով: Ռուսները պայթեցրին յիշեալի տունը և գիրքերը, իսկ ձերբակալվածներին տարան բանտ:

Դեռ չը գիտենք՝ պիտի յանձնեն կառավարութեան թէ՞ ոչ:

Այս բոպէիս ձերբակալվեց շէյխ Ալասկարը և, ռուսաց հիւպատոսարանում հարցաքննութիւնից յետոյ, տարվեց պահականոց: Յիշեալը ռուսահպատակ է, թէպէտ անցագիր չէ ունեցել և վաղուց է գաղթել Պարսկաստան: Նա համեստ կրօնաւորի և լաւ քարոզչի հռչաբաւ ունէր:

Կասկածներ կան, որ նորանոր խուզարկութիւնները և ձերբակալութիւններ պիտի լինեն, որովհետև կառավարական զէնքերը լիովին յանձնված չեն: Շէյխ Ալասկարի տունը խուզարկութեան ենթարկվեց: Երկու հրացան և մի պահարան-զրաստեղան հիւպատոսարան տանելիս մենք տեսանք: Ցայտնի կառավարական Իմամ-Զումա մուշտէիդը իր գիւղացիներից բաղկացած հեծելազնդի գլուխ անցած աւերում ու կողոպտում է շրջակայ գիւղերը:

Իմամ-Զուման Ատրպատականի ամենահարուստ կալուածատէրերի շարքին է պատկանում:

Ղարադաղից ստացված մի նամակից տեղեկանում ենք, որ Բահիմ խանի մարդիկ աւար ու կողոպուտ է որ շրջակայքից և հեռաւոր վայրերից կրում են Ղարադաղ:

Ռուսաց կառավարութիւնը իր ուղեկալների ՀԷասվելու և կողոպտվելու առիթով՝ 17 հազար թուման պահանջ է առաջադրել քաղաքապետ Իջլալ-ուլ-Մուլքին, միաժամանակ աւելացնելով որ Թաւրիզի ուղեկալը կողոպված է Սաթթար խանի մարդկանց ձեռքով և տակառներով ցեմենտը գործադրված է յիշեալի նորաշէն տան վրա: Ասում են, որ Սաթթար խանի մօտ միայն մի դիտակ է գտնվել, որի արժէքը, 25 ռ., ուղարկել է հիւպատոսարան:

Ուրմիայի և Սալմաստի շրջակայքից հակասական լուրեր շատ են լսվում. ըստ ոմանց այդ կողմերը թիւրք զօրքեր են մուտք գործել: Շուր

ՊՕԼՍԱԿԱՆ ՆԱՄԱԿՆԵՐ

Կ. Պոլիս, 13 մայիս

Հիլմի փաշան իր քաղաքական-վարչական ծրագիրը կարդաց խորհրդարանին մէջ: Դարտակ, այլ թիւրքերէն արուեստակեալ ոճով գրուած ճառ մը, որ Հիլմի փաշային վրայ, վարչագէտ մը աւելի, մտանիշ կընէ գրողի ծեքծեքանք, բառերու ընտրութիւն, նմանաձայնութիւններ: Երկայն էջերու մէջ կը գտնէք միայն հատուած մը, ուր կը ծրագրէ մեծ ձեռնարկութիւններ՝ երկրին մեռած տնտեսական վիճակը բարւոքելու, անգործներու, պատարկապորտներու գործ հայթայթելու համար:

Պարլամենտի մէջ լաւ բաղխումի հանդիպեցաւ վարչապետը. Սելանիկի հրէայ ներեսփոխանը ծանրագէտ քննադատելով Հիլմին՝ ոչ միայն վստահութեան քուէի արժանի չի համարիր, այլ նոյն իսկ կամբաստանէ բուռն լեզուով և կը պնդէ, որ զինուորական ատեանին յանձնուի իբրև պատասխանատու. հակասահմանադրական արիւնալից շարժումներուն: Բայց, ինչպէս գրած եմ առաջ, Հիլմին գիտէր, որ իրեն դէմ լարուած ուժեր

կան, այդ պատճառով ձգձգեց իր քաղաքական ճառին ընթերցումը, ու քուէարկութիւնը, զօրեղ դիմադրութիւններու մէջ, երաշխաւորելէ ետքը ներկայացաւ պարլամենտին։ Ու շահեցաւ քուէները։

Կըսուի թէ Պօլսի օսմ. կոմիտէի ու Շէվքէթ փաշայի և Նիազի բէյի մէջտեղ անհամաձայնութիւն կայ։ Հաւանական կը գտնեմ. զինուորական անկախ ընաւորութիւններ, անշուշտ, աւելի լայն են իրենց քաղաքական հայեացքներու մէջ, քան թէ նեղմիտ ազգայնամոլներ։

Կախաղանի համար բաւական առատ հունձք կը խոստանայ զինուորական ատեանը. երկու պարտիի համար վճիռ արձակուած ու կայսերական հրաման ելած է։ Բայց թէ կախաղանը պիտի բաւէ՞ վերջին ու վճռական հաստատութիւնը ըլլալու սահմանադրութեան, առ չեմ կրնար վստահացնել։ Շէվքէթ փաշան, հարցումի մը պատասխանելով, ըսած է, թէ խալիֆներու 75%-ը հակասահմանադրական է Պօլսի մէջ։ Մեր հաշիւով, դուցէ 90%-ը. իսկ դաւառներու մէջ 100%։

Ցարդ չդրեցի, թէ «Սերբեստիի» խմբագիր, «Իկդամի» խմբագիր ու արտօնատէր փախուստ տուած են Թիւրքիայէն ու իբրև թէ հակասահմանադրական ճանչցուած։ Այո, փախուստ տուած են ու հրամայուած, որ զինուորական ատեանին ներկայանան, բայց ոչինչ։ Առաջին օրուընէ իսկ յայտնի էր, որ, բանակը Պօլիս մտած թէ ոչ, պիտի հալածուէին կոմիտէի դիմադիր ուժերը։ Լաւ ըրին որ խոյս տուին. կուսակցական բուռն և մոլեգին թափին տակ կը սպաննուէին անտարակոյս։ Ալի Քէմալի համար ըսուեցաւ, թէ նոյն իսկ ժուռնալներ տուած է Համիդի, ու իր անունովը հրատարակուեցան իսկ իբրև թէ մեծ կարևորութիւն ունեցող բաներ։ Ալի Քէմալը արտասահմանէ կը հերքէ ատոնք ու կըսէ, թէ շինծու են։ Շատերս հաւատացած չէինք արդէն ոչ ըսուածներուն և ոչ գրուածներուն. մեր մէջ սուտն և ճշմարիտը ոչ միայն քով քովի, այլ իրարու տեղ կանցնին և միևնոյն լաթերը կը հագնին։ Այժմ ալ աւելի ուրախ ենք, որ կարկտնուած, արուեստական ստութիւնն է որ կը նետուի անոնց երեսին իբրև փաստ։

Շահէն

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԴԱԼԼԷՏԵԱՆ ԱՌԻԹՈՎ

—

Մոսկվայի հայ գաղութի ծխականների ընդհանուր ժողովը ի նկատի առնելով, որ Կաթողիկոսին դիմաւորելու համար նախորդ (մայիսի 16-ի) ժողովում ընտրված ժամհարեանն ու Տարասովը հրաժարվել են, ընտրել է երեք նոր պատգամաւորներ՝ Խալաթեանին, Շահ-Նազարեանին և Մամիկոնեանին։ Ընտրված է նաև 12 հոգուց բաղկացած կարգադրիչ յանձնաժողով։

—

Մոսկվայի հայերի մէջ, «Բ. Ս.»-ի ասելով, օրվայ խօսակցութիւնը Կաթողիկոսի օծութեան խնդիրն է։

Նախկին կաթողիկոսները օծվում էին Էջմիածնում ու ապա միայն գնում Պետերբուրգ։ Այժմ, ինչպէս ասում են, Ամենայն Հայոց Մատթէոս Կաթողիկոսին Կ. Պօլսի ռուսաց դեսպան Զինովիէվի միջոցով առաջարկված է ժամանել Պետերբուրգ հայրապետական եկեղեցու մի քանի անյետաձգելի գործերի մասին խորհրդակցելու և ապա միայն ուղևորվելու Էջմիածին՝ օծումն ստանալու։

Տեղական հայերի մի մասը այդ բանը համարում է շեղումն հին սովորութիւնից, իսկ ուրիշները, ընդհակառակը, յիշեցնում են, որ հայ ժողովրդին սիրելի համբաւաւոր Ներսէս V-ը, իր ընտրութիւնից յետոյ, Քիշինէվից գնաց նախ Պետերբուրգ և ապա միայն ուղևորվեց Էջմիածին։

Այդ այն կաթողիկոսն է, որի անուան հետ հայերի յիշողութեան մէջ շաղկապված են Նիկոլայ Առաջին Կայսեր՝ նրա մասին արտասանած նշանաւոր խօսքերը։

Ներսէսը մինչև ընտրվելը հալածական էր։ Կոմս Պասկեվիչ Երիվանսկու հետ ընդհարվելու պատճառով նա աքսորվեց Կովկասից Քիշինէվ։ Նրան կաթողիկոս ընտրելուց յետոյ, նրա պալատական թշնամիներից մէկը, ինչպէս աւանդութիւնն ասում է, զեկուցեց Նիկոլայ I Կայսրին, որ ընտրված է «թագաւորի թշնամին»։

Նիկոլայ I-ը հարցրեց զեկուցանողին.

— Իսկ ո՞վ է ընտրել նրան։

— Իր ժողովուրդը,—պատասխանեց զեկուցանողը։

— Ժողովրդի ձայնը՝ Աստուծոյ ձայնն է,—վճռեց Կայսրը և հաստատեց Ներսէսին կաթողիկոս, հրամայելով միայն նախապէս կանչել նրան Պետերբուրգ։

ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ԴԱՒԱՌԻՑ

—

Ախալցխա, 15 մայիսի

Տեսնելով քաղաքիս փողոցների անմաքրութիւնները՝ ակամայից բացադանչում ես՝ «Երանի գաղունը չը գար, ձիւները չը հալվէին, որ ստիպված չը լինէիր այդ կեղտոտութիւնների միջով, նրանց կոխելով անցնելու։ Ինչ՞ը չէ կարելի տեսնել մեր՝ մանաւանդ մի քանի փողոցներում—էլ կենդանիների և թռչունների փտած դիակներ, լուացքի հոտած ջրեր, մարդու և անասունների աղբ, ամեն տեսակ կեղակուրների մնացորդներ և այլն։ Այստեղ չենք կարող անհրաժեշտաբար չը յիշատակել մի փաստ, որ, որքան ախալցխացին մաքրասէր է իր տան ներսի վերաբերմամբ, նոյնքան անմաքրասէր է իր տան չորս պատերից դրսի վերաբերմամբ։ Ներսը տան յատակները լիզել, իսկ երկու քայլի վրա աղբի մէջ ոտքը կոխել՝ բաւական անհասկանալի է...

Մեզ զարմացնում է մի բան. մի՞թէ մեր աւագները խուփ աչքերով են մեր գալիս փողոցներում, որ գոնէ նրանցից մէկը երբէք չը նկատեց այդ գարշելի բաները։ Իսկ եթէ այդ իրանց պարտքը չէ՝ այդ ուրիշ։ Շատ ծիծաղելի է ախալցխացոց պարծանքը, որ Աբասթումանի և Բօրժոմի հետ հարևանութիւն են անում։

Քաղաքային վարչութիւնը փողոցների մաքրութեան վրա բոլորովին չը մտածելով և տների բակերի մաքրութեան վրա էլ ոչ մի հսկողութիւն չունենալով՝ նոյնքան մտածում է և քաղաքի լուսաւորութեան մասին։ Ճիշդ է, դէպի կլուբ տանող մի երկու փողոցների վրա հատ ու կտոր ճրագներ կան, բայց քաղաքի մնացած մասերում տիրում է «խաւարումն»։ Այդ բանն աչքի առաջ ունենալով՝ չենք կարող ուրախութեամբ չարձանագրել մեր նոր գաւառապետի 1½ ամիս առաջ արած այն կարգադրութիւնը, որ իւրաքանչիւր տանտէր պարտաւոր է գիշերները վառած լապտերներ կախել պատերից՝ փողոցի վրա։

Որքան լաւ կը լինէր, եթէ նոյն խստութեամբ հետևէին և քաղաքի մաքրութեան։

Մուրադ Ասպետ

ԽՈՆԱՐՀԵՑԷՔ ՓՈՂԻ ԱՌԱՋ

(Համեմատութիւն հին և նոր սերնդի)

—

Կ. Հ. Բ. Ընկերութեան վերջին ժողովը առիթ է տալիս շատ տխուր խորհրդածութիւնների։

Ակամայից մարդ ստիպված է համեմատեան դնել հայ հին և նոր սերունդը։

Համեմատութեան դնել Բարեգործ. Ընկերութեան վարիչների գործունէութիւնը, երբ նա ղեկավարվում էր բուրժուազիային, այն ևս խոշոր բուրժուազիային պատկանող հին սերնդի ներկայացուցիչների ձեռքով, և նոյն ընկերութեան վարիչների այժմեան գործունէութիւնը, երբ նա ղեկավարվում է նոր սերնդին պատկանող և բուրժուազիան որպէս թէ պախարակող ներկայացուցիչների ձեռքով։

Եւ ինչ ենք տեսնում. հին սերունդը, ի դէմս արխի-բուրժուաների, ոչ մի նշանակութիւն չէր տալիս փողին, մասնաւորապէս, երբէք մտքովն անգամ չէր անցկացնում, թէ փողի համար կարելի է մեկին Բարեգործական Ընկերութեան պատուաւոր անդամ ընտրել։

Անանեաններ, Մանթաշեաններ, Մելիք-Ազարեաններ, Զիթախեաններ—բուրժուազիայի և պլուտոկրատիայի խոշոր ներկայացուցիչներ—կանգնած լինելով Բարեգ. Ընկերութեան գլուխ, նուիրելով իրանք և ուրիշներից ստանալով հազարաւոր նուէրներ, երբէք չէին ձգտում, մտածում ու առաջարկում այդ նուիրատուներին՝ արժանացնել պատուաւոր անդամի կոչման։ Ընկերութեան անդամների մէջ ևս չէր ծագում միտք՝ առաջարկել նրանց ընտրելու պատուաւոր անդամ յատկապէս դրամական նուէրների համար։

Այդ ամենը ցոյց է տալիս, թէ հին սերնդի ներկայացուցիչները որքան բարձր էին գնահատում պատուաւոր անդամի կոչումը։ Նրանց մտքովն անգամ չէր անցնում, թէ մեկին կարելի է փողի, մասնաւորի համար պատուաւոր անդամ ընտրել։ Նրանք պահանջում էին առանձին, աչքի ընկնող ծառայութիւններ, այն ևս բարոյական։

Եւ առաջին անգամ, երբ Ախալցխայի ճիւղը առաջարկեց ընկերութեան պատուաւոր անդամ ընտրել գնդապետ Իսահակ Մելիք-Հայկազեանին, որ եղել էր ճիւղի հիմնադիր, երկար տարիներ վարել էր նրա նախագահի պաշտօնը, հիմնել էր հիւանդանոց և ընթերցարան, հին սերնդի ներկայացուցիչները դարձեալ բաւական չէին հաւարում այդքան ծառայութիւնները՝ նրան արժանացնելու պատուաւոր անդամի կոչումին, և մեծ ջանքեր պէտք եղան գործադրելու, որ ճիւղի առաջարկն անցնի։

Եւ Անանեանին, Մելիք-Ազարեանին, Բագրատ Նաւասարդեանին, Մանթաշեանին պէտք եղաւ ամբողջ 20 տարիներ սպասել՝ ստանալու իրանց հիմնած, նպաստած ընկերութեան պատուաւոր անդամի կոչումը, այն ևս ոչ թէ նրա համար, որ զանազան ժամանակներ դրամական առատ նուէր էին արել, այլ որովհետև առանձին և գնահատելի ծառայութիւններ էին մատուցել ընկերութեանը երկար և ձիգ տարիների ընթացքում իբրև նախագահ, փոխ-նախագահ, հիմնադիր և այլն։

Բայց հին սերունդը հեռացաւ։ Ասպարէզ եկան նոր սերնդի ներկայացուցիչները։ Եւ նրանք շատ հեշտութեամբ սկսեցին պատուաւոր անդամի առաջարկներ անել։ Առաջին սայթաքումից յետոյ՝ երկրորդը կատարվեց Տ. Աֆրիկեանի դէպքում։ Տիգրան Աֆրիկեան կարող է շատ արժանաւոր մարդ լինել, շատ ծառայութիւններ մատուցած լինել այս ու այն ընկերութեան, բայց Կ. Հ. Բարեգործական Ընկերութեան ասպարէզում նա միայն մի տարի է, որ հանդէս է եկել, տալով 4700 ր. մի գումար, որ նա կորել է մի ուրիշ ընկերութիւնից, որին խոստացել էր տալ։ Աւելի փափկանկատ վարիչներ նոյնիսկ կը տատանվէին ընդունել ընկերութեան համար մի այնպիսի գումար, որ ստացվելու է ազգային մի ուրիշ ընկերութեան զրկումից։

Բայց նոր սերնդի ներկայացուցիչները այլ կերպ են մտածում։ Եւ ոչ միայն այլ կերպ են մտածում, այլ և նրանք գտնում են, որ հէնց այդ 4700 ր. գումարը միայն բաւական է մեկին պատուաւոր անդամի կոչումն տալու։

Եւ ուրեմն, երբ հին սերնդի ներկայացուցիչները, արխի-բուրժուաները անհնար էին համարում փողի համար մեկին պատուաւոր անդամ ընտրել, նոր սերնդի ներկայացուցիչները բարձրաձայն գոռում էին ժողովում, թէ փողը ամեն բան է, թէ նա ոյժ է, թէ պէտք է երկրպագել նրան, թէ փողը միայն բաւական է մեկին պատուաւոր անդամի կոչման արժանացնելու։

Եւ նախկին մի արժատական հուժկու ձայնով գոռում էր. «4700 ռուբլին փող է, փող է, աւազ չէ»։ Եւ իրան ալմատական մտքերի տէր ցոյց տուող մի ուրիշ զարմանում էր ու պախարակում այն մարդկանց, որոնք պնդում էին Ղ. Աղայեանի հետ, թէ փողը և պատիւը չը պէտք է շփոթել, թէ Բարեգ. Ընկերութիւնը չը պէտք է դարձնել Վանքի բակը, ուր ազգային մեծ գործիչների հետ փողի ոյժով թաղված են և Ալեքսիներ, Սուրէնեաններ։

«Փող է, փող է. դա հանաք չէ»—դեռ թնդում է շատերի ականջում նախկին արմատականի աղաղակը։

Այդ միայն ցոյց է տալիս, որ նորընծայ բուրժուա դարձածը հազարապատիկ աւելի թունդ բուրժուա է դառնում, քան հին սերնդի արխի-բուրժուաները։

«Փող է, փող. խոնարհեցէք նրա առաջ»—գոռում են այդպիսի նորընծաները։

Շահրիար

ԶԲՕՍԱՆՔ ԿՈՒԼՏՈՒՐԱԿԱՆ ՆՊԱՏԱԿԻ ՀԱՄԱՐ

—

Մեր երկրի զանազան տեղերից դիմում են Հայ Գիւղատնտեսական և Տնայնագործական Ընկերութեանը խնդրելով՝ բանալու ընկերութեան ճիւղեր, հիմնելու արհեստանոցներ և տալու ցուցումներ գիւղատնտեսութիւնից։

Ընկերութեան վարչութիւնը կարողացել է շատ խնդիրներ լուծել, բայց աւելի և մեծ ծանալով կը գործէր, եթէ միջոցներ ունենար շրջիկ մասնագէտներ ուղարկելու և արհեստանոցների թիւը մեծացնելու։

Ամառվայ ծրագիրների իրագործմանը պէտք է նպաստի այն հասոյթը, որ սպասում է Ընկերութիւնը՝ առաջիկայ կիրակի օր, մայիսի 24-ին տրվելիք իր զբօսանքից։

Եթէ մեծ լինի զբօսանքից ստացած եկամուտը, կը բացվին լեռնային շրջանի մի շարք գիւղերում արհեստանոցներ։

Ցանկալի է, որ հասարակութիւնը նպաստէր զբօսանքի աջողութեանը։

ՄԻ ՅԵՂԱՇՐՋԷՔ ՓԱՍՏԵՐԸ

—

«Գործ» թերթը, որ վերջերս մի բոպէ դադարել էր իր ստախօսական և դաւաճանական արշաւանքները «Մշակի», Հ. Առաքելեանի և հայ հասարակութեան դէմ, նորից բարձրացրել է գլուխը, այս անգամ հանդէս գալով աւելի գազիր, աւելի կեղտոտ, աւելի պրօվոկատօրական ստորութիւններով, քսութիւններով և մատնութիւններով։ Ասված է, «горбатаго могила исправитъ».«Գործը» անկարող է առանց պրօվոկացիայի մնալ։ Բաւական է, եթէ դուք մի ամենափոքր, ամենաչնչին աննպաստ կարծիք յայտնէք, բաւական է, որ դուք համարձակվիք նոյնիսկ արտատպել ուրիշ թերթերից մի որևէ փաստ այն ոճրագործութիւններից, մատնութիւններից, դաւաճանութիւններից, որ ամեն րոպէ գործվում են հայ ժողովրդի, նրա իրաւունքների, շահերի դէմ, և ահա բարձրանում է վայնասունը։ Այդ վայնասունը, գոռումը չէ բարձրանում, երբ մի որևէ փաստ ոճրագործութիւններից տպվում է գունաւոր «Մանզումիէ Էֆքեար» թերթում, ռուսաց «Слово», «Русскія Вѣдомости» լրագիրների պէս ազատամիտ թերթերում, գերմանական, ֆրանսիական լրագիրներում, բայց հէնց որ միևնոյնը արտատպվում է «Մշակի» մէջ, «գործականների» կատաղութիւնը իր գագաթնակէտին է հասնում։ Միևնոյն ժամանակ նրանք աշխատում են հաւատացնել, թէ «Մշակի» նշանակութիւնը զրօյի է հաւասար։ Եթէ զրօյի է հաւասար, էլ ինչու է այդ վայնասունը։

Այն ամենը, ինչ որ գրված է «Մշակում» որոշ տեսակի սխրագործութիւնների, Երզրումի դէպքի, Զոհրապի և Վարդգէսի ամօթալի վարմունքի մասին, ոչ «Մշակն» է հնարել, ոչ Հ. Առաքելեանը։ Նրանք տպված են Կ. Պօլսի թերթերում, Պետերբուրգի Հեռագրական Գործակալութեան հեռագիրների մէջ (տպված նոյնիսկ «Գործի» մէջ), «Слово», «Рус. Вѣдомости» թերթերի, ֆրանսիական, անգլիական և գերմանական թերթերի մէջ։

Բայց անբարեխղճութեան, ստախօսութեան, զրպարտութեան մէջ դափնիներ վաստակած «Գործը», անգիտութեան տալով այդ ամենը, այնպէս է ցոյց տալիս, որ իբր թէ այդ ամենը հնարել են «Մշակը» և Հ. Առաքելեանը։

Երբ «Մշակը» պախարակում է ազգային ինքնակոչ փրկիչների ազգակործան ու դաւաճանական սխրագործութիւնները, դա համարվում է «Գործի» կողմից պրօվոկացիա. բայց երբ իսկական պրօվոկացիա է կատարվում հայ ժողովրդի դէմ, սուտ և կեղծ հեռագիրներով ռուսաց զօրքի մասին, ահ, «Գործը» այդպիսի իսկական պրօվոկացիան, դաւաճանութիւնը պախարակելու ոչինչ չէ գտնում։

Մենք նորից ստիպված ենք կրկնել, որ որոնեն դաւաճաններին, մատնիչներին սեփական շարքերում. փառք Աստուծոյ անվերջ և անհամար է նրանց թիւը։

Եւ, բարեբաղդաբար, «կենդանարար արևը և առողջ ոգին», իսկական թշնամին և բարեկամը ճանաչելու ընդունակութիւնը արդէն սկսել է տարածվել հայ ժողովրդի մէջ։

Հայ ժողովուրդը, այսօր, շատ լաւ գիտէ, շատ լաւ է ճանաչում, թէ ով է իր իսկական թշնամին և բարեկամը, ով է մատնիչը և դաւաճանը։

Զուր է «Գործը» միջից կէս լինում ապացուցանելու, թէ «Մշակը» փառաբանել է Աբդիւլ-Համիդի քաջարի զինուորներին։ Անհերքելի փաստերով, իրա «Գործի» մէջ տպված հեռագիրներով ապացուցված է, որ դաշնակցականները, իրանց կոյր ատելութեան մէջ դէպի երիտասարդ-թիւրքերը, ոչ միայն գործիք դարձան Աբդիւլ-Համիդի ռէակցիայի ձեռքում, այլ և պատգամաւորութեամբ գնացին Զաթալջա համոզելու օսմանեան զօրքերին չը քայլել Կ. Պօլսի վրա, և թէ «սահմանադրութիւնը կը ծաղկէ Աբդիւլ Համիդի ձեռքի տակ»։

Վերցրէք «Слово» օրաթերթի № 788-ը և դուք այնտեղ կը կարդաք առաջնորդող յօդուած, ուր բառ առ բառ տպված է. «Նրանք (հայերը) մանակցեցին մարտի 31-ի հակայեղափոխութեան մէջ. հայ պատգամաւոր

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԲՕՍՖՕՐԻ ԱՓԵՐԻՑ

—

Նոր սուլթանի հաւատարմութեան երդումը սահմանադրութեան

Կ. Պօլիս, 7 մայիսի

Սուլթան Մուհամմէդ V-ը բոլորից այսօր իր գահակալութեան տարիթով կատարվող հանդէսների վերջին արարողութիւնը։

Գահ բարձրանալու օրն իսկ Սերասկերատում տեղի ունեցաւ բիաղ կոչվող կրօնական արարողութիւնը, որի ընթացքում շէյխ-իւլ-իսլամի, մինիստրութեան, պարլամենտի և սենատի նախագահների և այլ քաղաքացիական ու զինուորական բարձրաստիճան անձերի ներկայութեամբ կատարեց, որպէս փադիշահ և որպէս սահմանադրական փադիշահ, օրինական երդումը։ Այնուհետև տեղի ունեցաւ, մեծ շքով, սուր կապելու արարողութիւնը, որն օսմանեան վեհապետի համար համապատասխան է թագադրութեան հանդէսին։ Իսկ այսօր կատարվեց զօրքերի, երաժշտութեան, կեցցէների և փառաբանութիւնների մէջտեղ հաւատարմութեան ուխտը սահմանադրութեան։

Ինչպէս նախորդ արարողութիւնների ժամանակ, նոյնպէս և այսօր, ոտքի վրա էր ամբողջ մայրաքաղաքը։

Պարլամենտի շէնքի առաջ, Այա-Սոֆիայի հրապարակում, այլ և այլ զէնքի զօրագնդեր շղթայաձև բարևի կանգնած՝ հեռու էին պահում բիւրաւոր, յարաշարժ, խանդավառ ամբոխը, որ խուժել, բռնել էր փողոցների բերանը։

Այս պակերը յիշեցրեց ինձ միւսը, մարդի 31-ի բազիբօզուկային ապստամբութիւնը, երբ նոյն հրապարակի վրա իշխում էին Աբդիւլ-Համիդի կաշառված, անկարգ, անկանոն, վայրագ հօրդաները։

Մեծ դժուարութեամբ աջողվեց ինձ ճեղքել հեծելազօրքի խիտ շղթան և դուրս գալ ազատ հրապարակը։ Ոսկեհամուկ, շողշողուն համազգեստով օֆիցէրներ հսկում էին զօրքերի կարգապահութեանը և տենդագին սպասում՝ Մուհամմէդ V-ի գալուստը։

Անցնելով հրապարակից մտնում եմ պարլամենտ։ Դրան առաջ՝ պահակ ոստիկանը արձանագրում է մուտքի տոմսակները, թէ ովքե՞ր մուտք են գործում և ինչ տիտղոսով։ Այս կարգադրութիւնը բացառիկ է, յատուկ՝ միայն օրվայ հանդիսաւորութեան։

*

Երէկ, նիստի ընթացքում, Ահմէդ Ռիզաբէյը յայտարարեց, որ նոր սուլթանը սահմանադրութեան ուխտը կատարելու է, խորհրդարանի առաջ, այսօր։ Մինիստրնախագահ Հիլմի փաշայի հետ խորհրդակցելով՝ որոշել են, որ Մուհամմէդ V-ը իր երդումը կատարէ պրեզիդիումի բեմից։ Դահճառը կարդացվի պատգամաւորների ատենախօսութեան ամբիօնից։ Որովհետև ազատարար բանակի գլխաւոր-շտաբը, մօտաւորապէս 100 հոգի, ցանկացել է ներկայ գտնվել հանդէսին, տեղի անձկութեան պատճառով 250-ից աւելի պատգամաւորներին պէտք է յատկացվի միայն մուտքի 50 տոմսակ, իւրաքանչիւր սեկցիայի համար 10 տոմս։ Պատգամաւորների երեսը թթուեց։ Նրանցից շատերը խոստացել էին նախապէս մացնել իրանց ազգականներին և բարեկամներին պարլամենտ այս եզակի օրը։ Եւ ահա նրանք յոյս են դնելու միայն բաղդին, թէ վիճակն ընկնելու է արդեօք իրանց։ Ահմէդ Ռիզան կարդում է այնուհետև այն բանաձևը, որի վրա պիտի երդուի սուլթանը։

«Սերասկերատում, բիաղի հանդէսին, երդուեցի լիովին յարգել շարիաթն ու սահմանադրութիւնը և երբէք չը թերանալ ազգի իրաւունքներն ու հայրենիքի շահերը պաշտպանելուց։ Ցանկանում եմ, որ դուք էլ փոխադարձաբար կատարէք ձեր երդումը»։

Պատգամաւորներից ոմանք նկատեցին, որ պէտք է սուլթանն ասէ «երդուում եմ», փոխանակ «երդուեցի»-ի։ Բայց ուրիշներ, գլխաւորաբար հոգևորականներից, առարկեցին, որ սուլթանը, գահակալութեան օրը, հանդիսաւորապէս երդուել է Սերասկերատում, ուստի և անյարմար էր կրկնել տալ երդումը։ Հալէպի պատգամաւոր Նաֆի փաշան բացատրեց, որ թիւրքերէնի մէջ երդուեցի և երդուում եմ նոյն նշանակութիւնն ունեն, հետևաբար չարժէ ծանրանալ այդ կէտի վրա։ Եւ վէճը փակվեց։ Պատգամաւորները առհաս սրակ շատ դիւրահաճ են։ Անկասկած, երդումն ունի ձևական նշանակութիւն։ Երդումը չէ, որ արգելք պիտի լինի ոռնակոխ անելու սահմանադրութիւնը, ինչպէս մեծադղորդ կերպով ապացուցել են բոլոր բռնակալները զանազան ժամանակներում, օրինակ մի Լուդովիկոս XVI, մի Մահմէդ-Ալի շահ և մի Աբդիւլ-Համիդ։ Բայց քանի որ ձևականութեանը տրվում է որոշ նշանակութիւն, պէտք է որ նա տեղի ունենայ ամբողջապէս։ «Երդուեցի» և «երդուում եմ» նոյն բանը չէ, որքան որ էլ պնդեն կազուիստ Նաֆի փաշաները և այն հոգևորականները, որոնք առարկում էին, թէ երդումը կատարվել է արդէն մի անգամ Սերասկերատում, որպէս թէ պատերազմական պաշտօնատունը լինէր պարլամենտ...

Բայց այնքան տրամաբանութիւն չորոնենք այնպիսի «ազգի ներկայացուցիչներից», որոնք աւելի մեծ յօժարութեամբ, աւելի մեծ հրճուանքով են սանձում ժողովրդական իրաւունքները, քան գործադիր իշխանութիւնն ինքը։

Նիստի փակվելից յետոյ պատգամաւորները վազցին իրանց սեկցիաները՝ կատարելու տոմսակների վիճակահանութիւնը։ Տեսնելու էիք յուսահատութիւնը նրանց, որոնց չէր ժպտացել բաղդը։ Նրանք գնում էին questure-ը՝ աղերսելու, որ չը զրկեն իրանց հրաշագործ տոմսից։ Բայց ի զուր։ Ազատութիւնը իրանց հետ բերող օֆիցէրները հաղիւ թէ հասկանային յուսախաբ եղած պատգամաւորների մեղմաղաղութիւնը...

*

Բարձրանում եմ սանդուղներից։ Նստասրահի նրբանցքները լուռ են։ Զը կայ հանդիսաւոր օրերի աղմուկն ու ժխորը։ Բոլորն շտապել են ներս, նախապէս գրաւելու լաւագոյն տեղերը։ Սրահում տեղի է ունենում մամուլի օրինագծի վիճաբանութիւն։ Բացի մի քանիներից՝ պատգամաւորների ջանջախիչ մեծամասնութիւն ճգնում է կապկպել ապագրական խօսքի ազատութիւնը, որը իբրև թէ պատրաստել է մարտի 31-ի ողբերգութիւնը։

Մինչդեռ վիճաբանութիւնները տեղի էին ունենում պարլամենտում, սուլթան Մուհամմէդ՝ կէսօրից յետոյ ժամը 1-ին դուրս գալով Դոլմա-Բաղչէի իր ապարանքից՝ նստեց «Մէշրուտիէտ» (սահմանադրութիւն) կոչվող զբօսանաւը Գալի Ահմէդ Մուխտար փաշայի, կայսերազուն իշխանների, պալատի առաջին քարտուղար՝ նշանաւոր Խալիդ Զիա բէյի, առաջին սենեկապետ՝ կամերհէր Լութֆի էֆէնդիի և այլ հետևորդների ընկերակցութեամբ։

Կայսերական զբօսանաւի առաջից գնում էր «Բէյբէր» շոգեմակոյկը։ Դրօշազարդված էին նաւահանգստի բոլոր օսմանեան թէ օտար նաւերը։

Մուհամմէդ V-ի զբօսանաւը կանգ առաւ Հիւնքեար Իսկէլէսիի առաջ, ուր սպասում էին գեներալիսիմուս Շէվքէթ փաշան, II և III զօրաբանակների հրամանատար Հիւսնի և Պերթէվ փաշաները, ոստիկանութեան մինիստր Ալի փաշա և երկու վաշտ զինուորներ։ Այն րոպէին, երբ կայսրը ցամաք ոտք կոխեց, նիզակաւոր գնդի նուագախումբը նուագեց իսկոյն «Ազատութեան Երգը»։

Սուլթանը նստեց քառաձի շքեղ կառքը։ Նրա դիմաց՝ Ահմէդ Մուխտար փաշա։ Առաջից ճանապարհ էր բաց անում նիզակաւոր հեծելազնդի մի վաշտ, իսկ հետևում էին կառքին Մահմուդ Շեվքէթ փաշա, ձի նըստած, ինչպէս և թիկնապահներ և կայսերական շքախմբի անդամներ։ Ճանապարհի ամբողջ երկարութեան վրա, մինչև պարլամենտ, աջ ու ձախ շարված էին զինուորներ։

Ժամը 2-ին պատգամաւորները, որ անհամբեր սպասում էին սուլթանին և այդ պատճառով էլ նրանց հետաքրքրութիւնը բոլորովին ուրիշ կողմ էր ուղղված, յանկարծ թունդ եկան և թողնելով իրանց գրասեղանները՝ խռնվեցին պատուհանների առաջ։

Հրապարակում բարձրացել էր ծափահարութիւնների աղմուկը։

Զոհրապը ընտրվեց փոխ-նախագահ այն պարլամենտի, որին այդ օրերը ապստամբված զինուորները մաքրեցին երիտասարդթուրքերից, իսկ մի ուրիշ հայ պատգամաւորը Վարդգէսը չհաճեց գնալ իբրև պատգամաւոր ահրարական պարլամենտի պատգամաւորների հետ միասին՝ Սալոնիկի լէգէոնարներին ընդ առաջ, ամօթալի, երկփոխ միսիայով, հաւատացնելու նրանց թէ սահմանադրութիւնը կը ծաղկէ Աբդիւլ-Համիդի դաւաճան ձեռքի տակ։

Ուրեմն, ըստ «Գործի», դաւաճան, մատնիչ են ամէնքը, և «Слово», և «Рус. Вѣдомости», և «Ժուրնալ», և «Տագերլատ», և Պետերբուրգի Հեռագրական Գործակալութիւնը, և «Մշակը», մի խօսքով ամէնքը, ամէնքը, բացի, ի հարկէ, «Գործից» և «գործակալներից»։

Ողորմելիներ, մաքի և գրչի թշուառ թղուկներ, ԵՐԲ պէտք է խելքի դաս. ԵՐԲ պէտք է հասկանաք, որ այդ բոլորը զզուելի է։ Վերջապէս ԵՐԲ պէտք է հանգիստ թողնէք ժողովրդին ձեր քսութիւններից, պրովոկացիաներից, ձեր ամէն արժէք, գին և նշանակութիւն կորցրած խօսքերից՝ «դաւաճան, մատնիչ» և այլն։ Հ. Ա.

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

— Երէկ, Առմտեան Կովկասի գրաւման 50-ամեակի առիթով, զինուորական Ալէքսանդրօ-Նէվսկի տաճարում կատարվեց մաղթանք, որին ներկայ էր Փոխարքայ կոմս Ի. Ի. Վօրոնցով-Դաշկովը իր օգնականներով և շքախմբով։ Ներկայ էին նաև զինուորական պաշտօնեաները և բոլոր զօրամասերից մի-մի վաշտ։ Մաղթանքի ժամանակ Արսէնալի սարից կրակեցին 21 թնդանօթ։ Մաղթանքից յետոյ Փոխարքան իր առջևից քայլով բաց թողեց վաշտերին։ Հանդէսը վերջացաւ ժամը 12-ի մօտերը։ Այդ օրը աշխատանքներ չը կային զինուորական հաստատութիւնների մէջ։

— Թիֆլիսի սանիտարական-բժշկական մարմնի տեղեկութիւնների համաձայն, վերջին երկու շաբթվայ ընթացքում վարակիչ հիւանդութիւնները քաղաքում քչացել են։ Սուր վարակիչ հիւանդների բաժանմունքում ներկայումս պառկած են միայն մի-երկու վերադարձ տիֆով հիւանդներ։

— Երկիւղ կրելով թէ մի գուցէ ամառվայ շոգերին կրկին խօլերան երևայ Թիֆլիսում, բժշկական-սանիտարական մարմնի տեսուչ բժիշկ Կ. Ստեփանեան այժմեանից եռանդուն միջոցներ և պատրաստութիւններ է տեսնում համաճարակի առաջն առնելու նպատակով։ Նա այդ նպատակով ի միջի այլոց քաղաքային վարչութիւնից խնդրել է արագացնել նոր սպանդանոց կառուցանելու գործը. բացի այդ, նա հոգս է տանում օր առաջ վերսկսել տալ հակախօլերային պատուաստումների աշխատանքները։ Ամարային գործողութիւնների համար ընտրված կան նոր սանիտարական հոգաբարձուներ։

— Մայիսի 20-ին Ե. Ալմազովայի կանանց արհեստագիտական դպրոցում (Նեժեցկայա փող. № 3) բացվեց ձեռագործի և կար ու ձևի աշակերտուհիների պատրաստած իրերի ցուցահանդէսը։ Ցուցադրված իրերը ընդհանուր առմամբ լաւ տպաւորութիւն են թողնում այցելուների վրա. գնեը թանգ չեն։ Ցուցահանդէսը ի միջի այլոց այցելել է Թիֆլիսի նահանգի ժողովրդական դպրոցների տեսուչ Ֆէդորովսկին։ Ալմազովայի դպրոցը հիմնված է 1898 թւականին։ 11 տարվայ իր գոյութեան ընթացքում նա ունեցել է 566 աշակերտուհիներ, որոնցից ռուսներ՝ 244, վրացուհիներ՝ 115, հայուհիներ՝ 109, գերմանուհիներ՝ 49, թուրքեր՝ 3 և այլն։ Ցուցահանդէսում ի ցոյց դրված ձեռագործները կատարված են օրինակելի խնամքով։

— Մեզ խնդրում են տպել հետևեալը. «Մայիսի 3-ին Հալաբարի էջմիածնեցոց «Մարիամեան» դպրոցի օգտին կայացած զբօսանքից ընդհանուր մուտք եղաւ 947 ր. 79 կ., ծախք՝ 369 ր. 77 կ., զուտ արդիւնք՝ 578 ր. 2 կ.։ Դպրոցի հոգաբարձութիւնը իր շնորհակալութիւնն է յայտնում այն մի խումբ տիկիններին, օրիորդներին և պարոններին, որոնք իրանց եռանդուն աջակցութեամբ կամ տուած նուէրներով մեծապէս նպաստեցին զբօսանքի աջողութեանը»։

— Մեզ հաղորդում են, որ կիրակի, մայիսի 24-ին, առաւօտեան ժամը 10-ին, Մարիամեան-Յովնանեան դպրոցում Ուսուցչական Միութիւնը մի զրուցատրութիւն է կազմակերպում, թէ ռուսաց լեզուն մեր ծխական դպրոցներում ինչ մեթօդով պիտի աւանդվի։

— Հայուհեաց Որբանոցի Ընկերութեան վարչութիւնը խնդրում է մեզ յայտնել, որ նա շնորհակալութեամբ կոյս Թայիրեանի միջոցով ստացել է 10 ռուբլի տ. Ե. Ներսիսեանից ի յիշատակ իր ամուսին Ա. Ներսիսեանի։

— Սօլոլակի տունէլի աշխատանքները ժամանակաւորապէս դադարեցված են դրամի պակասութեան պատճառով։

— Ուրբաթ օրը, մայիսի 22-ին, կը նշանավի լիակատար լուսնի խաւարում։

— Շօրապանի գաւառի բազմաթիւ գիւղերում եկել է մեծ քանակութեամբ կարկուտ, որ խոշոր վնասներ է հասցրել ցանքերին ու այգիներին։

— Առաջիկայ շաբաթ նոր սակագին կորոշվի ծի համար։

— Վրաց «Դրօէբա» օրաթերթի ասելով, Կլօնէվի գիւղում մահացրել են տեղական կալւածատէր իշխ. Զ. Երիստովին։

— Մայիսի 18-ին Թիֆլիսից ոչ հեռու Կօջօրի ճանապարհի վրա գտնվել է ինտելիգենտ մարդու դիակ, որի մօտ ընկած են եղել զանազան սրուակներ ինչ-որ հեղուկներով։ Նաև ժօտիկ գտնվել է մի նամակ այս բովանդակութեամբ. «Իմ մահվան համար ոչ ոքի չը մեղադրել»։ Մեռածի ով լինելը յայտնված չէ։

— Երէկ Պետերբուրգից վերադարձաւ Անդրկովկասեան երկաթուղիների կառավարիչ գ.-մ. Նէյդգեբաուէրը։

— Քաղաքային դումայական ֆինանսական ժամանաժողովը բացասաբար է վերաբերվել Հայրումեանի տունը գնելու առաջարկութեանը։ Ինչպէս յայտնի է, այդ հարկանի մեծ տունը, որ գտնվում է Վեսլամինսկայա փողոցում, գնվելու էր Թիֆլիսի ոստիկանապետի դիւանատան համար։

— Մէջլիսների ընկերութեան անդամների ընդհանուր ժողովը նշանակված է մայիսի 27-ին։

— Առաջիկայ շաբաթ օրը մտադրութիւն կայ մի զբօսանք կազմել Մուշտայիդ այգում Թիֆլիսի գիմնազիաների 25 աղքատ աշակերտուհիների օգտին։

— Մեզ հաղորդում են, որ ուսուցիչ պ. Ե. Թաւարբէգեանը կազմել է հայրենագիտութեան դասագիրք, ծխական դպրոցների ծրագրի համաձայն, և շուտով կը յանձնի տպագրութեան։

— Ստացանք Վ. Փափազեանի «Մշուշ» պատմուածքը, 50 էջ, Թիֆլիս, գինն է 15 կ.։

— Մայիսի 28-ին լրանում է Վրաստանի էկզարխ Նիկոն արքեպիսկոպոսի սպանութեան տարին։ Այդ օրը Սիոնի տաճարում

Հէնց նոյն բօպէին նախագահը քուէարկութեան էր դրել օրինագծի յօդուածներից մէկը։ Բիւրա բէյը, ինչպէս ուսուցիչը՝ որ կարդի է հրաւիրում անուշադիր աշակերտներին, ստիպվեց կոչ անել անհանդարտ պատգամաւորներին՝ զբաղվելու իրանց գործով, մասնակցելու քուէարկութեան։ Պատգամաւորները վերադարձան իրանց տեղերը, մասամբ ամօթանաք, մասամբ էլ յուսախաբ, որովհետև ժողովուրդը ողջունել էր ոչ թէ սուլթանին, այլ Նիազի բէյին։

Բայց չուշացաւ նաև Մուհամմէդ V-ը։ Տասը բօպէից յետոյ աւելի ուժգին ծափահարութիւններ և «Փաղիշահըմ չօկ եաշա» օվացիաները ծանուցին նրա գալուստը։

Ալեկոծվեց, ծովի նման, նստասրահը։ Նախագահը հազիւ ժամանակ ունեցաւ արտասանելու, յուզումից զողդողուն ձայնով՝ «Նորին մեծութիւնը գալիս է» խօսքերը, երբ բոլորը թափվեցին պատուհանների առաջ, որոնք նայում են հրապարակի վրա։ Բիւրա բէյը խկոյն թողեց նախագահական աթոռը՝ փութալու համար սուլթանին ընդառաջ։ Huissier-ները հաւաքեցին, տենդոտ կերպով, նախագահի սեղանի վրա գտնվող թղթերը։ Վերջերին նախագահական պարդ թիկնաթոռը և նրա տեղ դրին մեծաքաշատ մի բազկաթոռ։

Որովհետև երժան արարողութիւնը պիտի կատարվէր պատգամաւորական պալատի և սենատի միացեալ ժողովում, վերևի յարկում նիստ գումարած սենատորները սկսեցին հետզհետէ ցած գալ և տեղ բռնել պատգամաւորների կողքին։ Անա Իտէվ փաշան, զինուորական ապստամբութեան ծանր օրերի պատերազմական մինիստրը, կարճահասակ, ալեխառն մօրուքով, մարաջախտի ոսկեհուռ համազգեստով, որ առաջանում է դանդաղաքայլ դէպի նախագահական ամբիոնի ձախակողմում դրված թաւշեայ բազմոցները։ Անա Սամի փաշան, ոստիկանութեան նախկին մինիստրը, համեմատաբար շատ աւելի երիտասարդ մի գեներալ, որ ստիպվեց հրաժարական տալ հակայեղափոխութեան օրերում, խուլիգան պրիտաուների նրա դէմ սարքած թշնամական ցոյցի հետևանքով։ Անա և յայտնի Սայիդ փաշան, նախկին մեծ-վեզիր, սենատի նախագահ։ Նա յորջորջվում է «Քիւչիւկ»—փոքրիկ—ժակդիրով, և իսկապէս, որովհետև հազիւ երկու արշին բարձրութիւն ունենայ նրա հասակը։ Սայիդ փաշան արդէն պառաւել է. քայլում է դժուարութեամբ և օգնականներով. խելացի դէմք ունի, որը շրջանակված է ձիւնի նման մազերով, ֆէսը, մի լայն ֆէս, իջել է մինչև ականջները և կիսով չափ ծածկել նրանց։ Ասենք դա ընդունված կարգ է պետական բարձրաստիճան պաշտօնեաների, մանաւանդ հինթիւրքերի համար։ Աբդիւլ-Համիդի ֆէսն էլ իջնում ու ծածկում էր ականջները...

Սայիդ փաշան կանգնեց նախագահական մեծաքաշատ աթոռի աջ կողմը, իսկ Ահմէդ Բիւրա բէյը՝ քիչ յետոյ՝ ձախ կողմը։

Երբ սուլթան Մուհամմէդի վագոնը մտաւ խորհրդարանի բակից ներս, դրան առաջ կանգնած նուագախումբը ածեց, անընդհատ բարձրացող օվացիաների մէջտեղ, կայսերական ողջոյնի եղանակը։ Խորհրդարանի արտաքին դրան առաջ, ուր դադար առաւ արքայական կառքը, սուլթանին դիմաւորեցին մինիստր-նախագահ Հիրմի փաշան, շրջապատված միւս մինիստրներով, արարողապետը, և այլն։

պատարագից յետոյ կը կատարվի հոգեհանդիստ, իսկ յետոյ, ցերեկվայ ժամը 12-ի մօտերը, ուղղափառ հոգևորականութիւնը թափօրով կը դիմէ էկզարխի սպանութեան տեղը՝ սինօդական գրասենեակի շինութիւնը, ուր կօծէ կատուցված մատուռը։

— Կիրակի, մայիսի 23-ին, ցերեկվայ ժամը 11-ին, Թիֆլիսի քաղաքային վարչութեան մէջ տեղի կունենայ ժուրնալիստների Թիֆլիսի ընկերութեան անդամների ընդհանուր ժողովը։ Զբաղմունքի առարկաներն են՝ 1) ընկերութեան գանձապահի հաշիւը, 2) վարչութեան քարտուղարի հաշուետուութիւնը, 3) վարչութեան անդամների և վերատուչիչ յանձնաժողովի ընտրութիւնները, 4) նոր անդամների ընդունելութիւնը, 5) անկէտայի հեռանքները, 6) Գելէյզվիլու զեկուցումը «պատուի դատարանի մասին»։

— Կաթնատնտեսական գիտելիքների տարածման գործը, որ սկսվել էր Գանձակի գաւառում, փոխադրվել է Թիւնէթի գաւառը որոշ ծրագրով. Ա. Քալանթար գործում է ներկայումս ինստրուկտոր Լ. Զարաֆեանը։ Վերջինս Թիւնէթից անցել է Թեթրախեվի, Ալվան, Ահմեդի գիւղեր, շրջելով գիւղից գիւղ, ցոյց է տալիս գիւղացի ազգաբնակութեանը կաթնատնտեսութեան կատարելագործված գործիքներ։

— Վաղը, շաբաթ օր, Զուբալովի անուան ժողովրդական տանը ժողովրդական ներկայացումների կազմակերպութեան հայկական սեկցիան տալու է մի վերին աստիճանի հետաքրքրական ներկայացում։ Առաջին անգամ դրվելու է բանաստեղծ Յով. Թումանեանի պօէմայից փոխադրված «Անուշ» պիէսը։ Պիէսը իր բովանդակութեամբ և խաղով լինելու է մի նորութիւն։ Հայկական հարազատ անպաճոյճ իրականութիւնից վերցված մի եղերական դէպք, սիրային աստառի վրա, երգերով, պարերով և երաժշտութեամբ, բեմին յարմարեցված և մեր շնորհալի բանաստեղծ Յով. Թումանեանի ձոր բանաստեղծական լեզուով նկարագրված, որի մէջ վառ ու կենդանի կերպով դուրս են բերված հայ գիւղական կեանքի վարք ու բարքի բնորոշ կողմերը։ Խորհուրդ ենք տալիս ներկայ լինել այդ հետաքրքրական ներկայացման։

ԳԻՏՈՒԹ., ԳՐԱԿԱՆ., ԳԵՂԱՐ.

ԹԱՏՐՕՆ ԵՒ ԵՐԱԺՇՏՈՒԹԻՒՆ

Բօբերտ Ադելհէյմը չորեքշաբթի, մայիսի 20-ին, նորից յիշեցրեց Թիֆլիսի իր յարգողներին Ռինի այն հերոսական ուժեղ, խոր զրամատիկական, հրայայտ դէմքը, որ նա պատկերացրել էր իր նախկին ներկայացումների ժամանակ։

Ադելհէյմի Ռինը քնքոյշ է մինչև կանացի ընաւորութիւնը և կատաղի է գազանի մռնչիւնը և յարձակումը։ Նա սիրասիրտ անձնուէր մի ընկեր է իր ազնիւ բարեկամների շրջանում և մի անխնայ ոսոխ անազնիւ դաւաճիրների դէմ։ Նա մինչև մեկուութիւնը զիջող և փաղաքշող մի սիրտ է իր պաշտած կանացի դէմքի առաջ և վայրենաբնազդ վրէժխնդիր, մի սարսափ իր հակառակորդի դէմ։

Հասարակութիւնը, որ լցրել էր Արտիստական թատրօնը, ընդունեց դերասանին ջերմ ողջոյններով և հեռացաւ թատրօնից գոհ սրտով, ուժեղ տպաւորութիւնների տակ։

Երէկ, մայիսի 21-ին, Ադելհէյմը երկրորդ անգամ հանդէս եկաւ Դէյի «Казнь» պիէսում և մեծ հաճոյք պատճառեց հասարակութեան թէ իր գեղեցիկ, ինքնատիպ խաղով և թէ իր ախորժելի և ճաշակով երգեցողութեամբ, որ ունի առանձին գրաւչութիւն։ Սիրող

ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆ

Հրանդ, «Ճեմարանը Բերբերեանի օրով», Երևան, 1909 թ., գինն է 10 կ.։

Վերոյիշեալ 16 էջ պարունակող գրքոյկով հեղինակը ուզում է ներկայացնել հասարակութեանը՝ ճեմարանի կեանքը Բերբերեանի օրով, որովհետև այնտեղ «տիրում է այնպիսի անմխիթար դրութիւն, որ թերևս շատերին անհաւատալի թւայ»։

Եւ ահա հեղինակը մի այնպիսի լեզուով է նկարագրում ճեմարանի կեանքը 1907 թ. և այնպիսի վերաբերմունք է ցոյց տալիս դէպի այդ հաստատութեան զեկավար մանկավարժական մարմինը, որ հէնց առաջին էջից արդէն ընթերցողը սկսում է կասկածել հեղինակի անաչառութեան մասին, իսկ վերջին էջերը կարդալիս միանգամայն համոզվում է, որ այդ գրքոյկը ոչ այլ ինչ է, եթէ ոչ մի պասկվիլ, որոշ միտումներով հրապարակ հանված։ Բերբերեանը անուանել է քննիչ վարդապետներին «կատաղած շներ». մի վերակացուի գործն է «ճեմարան այցելող օրիորդներին ընդունել, զբաղեցնել և ուղեկցել». մի ուրիշը «մի կատարեալ զինուորական է հայհոյելու մէջ». մի ուսուցիչ «աշակերտների հարցերից միայն կարմրում է». մի այլը «օգնութեան է կանչում ձեռքերի և ոտքերի շարժումները» և այլն։ Ճեմարանական կեանքը և դաստաւորութիւնը այս տեսակ լեզուով պատկերացնելուց յետոյ, հեղինակը, լինելով սիրահար գրրոցական փոթորիկների, «բուռն անհամբերութեամբ» սպասում է, որ ամէն բանից զզուած աշակերտները պայթեցնելու են «մի փառաւոր օր» փոթորիկ, որը «կուլնենայ իր ցանկալի հետևանքների հետ և աղէսներ»։

Իսկ թէ «ինչ ցանկալի հետևանքներ» կարելի է սպասել ճեմարանական աշակերտների «փոթորիկից», այդ մասին հեղինակը խոհեմութեամբ լռում է... Մենք մեր կողմից այսքանը նկատենք, որ ճեմարանի կեանքի կանոնաւորման և ուսումնական գործը աւելի ևս հաստատուն հիմունքների վրա դնելու համար ամենաէական և արմատական միջոցն է, ինչպէս և շատ անգամ շեշտվել է մամուլում, ճեմարանի կատարեալ անջատումը վանքից և միաբանութիւնից թէ տնտեսական-վարչական և թէ ուսումնական պայմանների վերաբերմամբ։ Քանի որ այս դեռ տեղի չէ ունեցել, երբէք ճեմարանը չէ կարող ապրել նորմալ կեանքով։ Ա. Նաղարէթեան

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Բիւրա, 5 մայիսի

1906 թ. ապրիլին Բիւրայի հայ ուսանողական «Սևան» ընկերութեան վարչութիւնը, համաձայն ընդհանուր ժողովի որոշման, ժամուլի միջոցով դիմել էր բոլոր այն անձանց, որոնք իրանց ուսանողութեան ժամանակ նպաստ էին ստացել ուսանողական գանձարանից, խնդրելով վերադարձնել իրանց պարտքերը, բայց տարաբաղդաբար այդ դիմումը չը տուեց դրական հետևանք։

Այնուհետև ժողովը, ստանալով ստոյգ տեղեկութիւններ մի քանի անձանց վերաբերեալ, որոնք ծառայութեան մէջ լինելով՝ այժմ հնարաւորութիւն ունեն վերադարձնելու վաղուց ստացած նպաստը, դիմել է այդպիսիներին ապահովացրած նամակներով, սակայն այս դէպքում ևս չէ ստացված որևէ պատասխան։

Ուշադրութեան առնելով այսպիսի վերաբերմունքը դէպի գանձարանը ունեցած իրանց պարտականութիւնների մէջ և այն հանգամանքը, որ ժողովը սպառել է բոլոր ունեցած միջոցները, սկսած բարոյական ազդեցութիւնից մինչև զգուշացումն՝ դիմել դատարանի, ընդհանուր ժողովը, շնորհիւ նիւթական կարիքի՝ օգնելու չքաւոր ուսանողներին և այլևս չը գիտենալով ուրիշ միջոց ներգործելու պարտադնց նախկին անդամների վրա՝ ծայրայեղ ցաւելով, ստիպված է դիմել տեղական դատարանին այն անձանց վերաբերմամբ, որոնք, ժողովի հաստատ տեղեկութիւնների հիման վրա, առանց դժուարութեան կարող են վերադարձնել իրանց պարտքերը։

Ուսան. «Սևան» ընկերութեան
Նախագահ՝ Կ. Սարգսեան
Քարտուղար՝ Յով. Պանուշեան
Գանձապահ՝ Յով. Իւզբաշեան

—

Անօրինակ փութկոտութիւն

Թիֆլիս, 20 մայիսի

Շատերին, երևի, յայտնի է, որ Թիֆլիսում գոյութիւն ունի «Կովկասեան հայոց դպրոցների ուսուցիչների և վարժուհիների ընկերութիւն», և որ այդ ընկերութիւնը, ինչպէս և բոլոր ընկերութիւնները, ունի իր վարչութիւնը, որը վարում է ընկերութեան ընթացիկ գործերը։ Անա այդ իսկ վարչութեանը, անցեալ մարտ ամսի 23-ին դիմում եմ ես մի գրութեամբ և... սպասում պատասխանի։

Անցնում է մի շաբաթ, երկրորդը, երրորդը, գալիս է հինգերորդը, վեցերորդը, և անցնում, գլորվում են միմեանց հետևից ոչ աւել, ոչ պակաս՝ յիսուներկու օրեր և անա վերջապէս մայիսի 16-ին ստանում եմ ես Միութեան վարչութեան պատասխանը, որից իմանում եմ, որ «վարչութիւնը հնարաւոր չը համարեց իմ գրութիւնը ըստ էութեան քննութեան նիւթ դարձնել, ուստի և որոշել է նախապէս պատճէնը վերցնել և յայտնել ինձ, որ, և այլն և այլն»։

Եւ այսպէս՝ Ուսուցչական Միութեան վարչութեանը՝ իմ գրութիւնը կարդալու և նրանից պատճէն հանելու համար հարկաւոր եղաւ յիսուն և երկու օր... և այդ Թիֆլիսում ապրող մի անդամի գրութիւնը պատասխանելու համար...

Որպէս զի պարզ լինի ընթերցողներին, թէ որքան արագ է ընթանում Ուսուցչական Միութեան վարչական գործերի գործավարութիւնը, աւելորդ չեմ համարում դնել այստեղ մի քանի զուգահեռականներ։ Երևանի կօնսիստորիան իմ մի գրութեանը, որի մէջ վիճակագրական բարդ տեղեկութիւններ էին հարկաւոր, մանրամասն պատասխանեց 28 օրում, Շուշու կօնսիստորիան 32 օրում, Գանձակի հոգևոր կառավարութիւնը 24 օրում, Նախիջևանինը 21 օրում, իսկ Թիֆլիսի Ուսուցչական Միութեան վարչութեանը, և այն էլ գործը ոչ ըստ էութեան քննելու համար, հարկաւոր եղաւ... 52 օր։

Այժմ, եթէ աչքի առաջ ունենանք, որ այդ բոլոր կօնսիստորիաներն ու հոգևոր վարչութիւնները հին, փտած, բիւրօկրատական հաստատութիւններ են, իսկ Ուսուցչական Միութեան խորհրդի մէջ նստածները ամենաթարմ և նորագոյն ոյժեր, որոնք կենդանի գործ են անում և իրանց անդամներին իսկոյն և եթ բաւարարութիւն տալիս, առանց բիւրօկրատիզմի և ձևական ծամածռութիւնների, եթէ, կրկնում եմ, աչքի առաջ ունենանք այդ բոլորը, այն ժամանակ մեզ կը մնայ միայն ցաւել, որ Ուսուցչական Միութեան վարչութեան մէջ մտած չէ մեր կօնսիստորիաների և հոգևոր կառավարութիւնների գործավարական արագութիւնը...

Այսքանը ըստ ձևի, իսկ ըստ էութեան՝ խօսելու առիթ երևի կունենանք։

Sapienti sat...

Միութեան անդամ՝ Ա. Աթանասեան

ՄԻ ԲԱՑՍՏՐՈՒԹԻՒՆ

Թիֆլիս, 21 մայիսի

Կովկասի Հայոց Բարեգործական Ընկերութեան ընդհանուր ժողովի ամսիս 17-ի նիստում իմ յայտնած կարծիքներս ծիշդ չէին արձանագրված «Մշակ» և «Գործ» լրագիրների մայիսի 20-ի համարներում. այդ պատճառով պարտք եմ համարում ներկայ բացատրութեամբ ուղղել այդ թերութիւնը։

Խորհրդի պ. նախագահը՝ առաջարկելով ընդհանուր ժողովին ընտրել պ. Տ. Աֆրիկեանին պատուաւոր անդամ՝ առաջ բերեց հետևեալ պատճառաբանութիւնները. «1) թէ պ. Աֆրիկեանը Բարեգործ. Ընկերութեան խորհրդի որամադրութեան տակ է դրել 4700 ռուբլի, որպէս զի այդ գումարով նպաստաւորվին 10 դիւրական դպրոց նուիրատուի ցուցմունքով. 2) թէ նուիրատուն խոստացել է շարունակել այդ 4700 ռուբլի նպաստի վճարումը նաև ապագայում, որով այդ գումարը ստանում է հարիւր հազար ռուբլի դրամագլխի իրաւունք տալու նշանակութիւն և 3) թէ պ. Աֆրիկեանը այս նուիրատուութիւնից դուրս էլ միշտ հանդիսացել է իբրև ազգային բարերար և բարեգործ»։

Իմ յայտնած կարծիքների ամփոփումը հետևեալն է. «Անձամբ անծանօթ եմ պ. Տ. Աֆրիկեանին, բայց միշտ լսել եմ նրա առատաձեռն նուիրատուութիւնների համար և այսօր էլ մեծ գոհունակութեամբ լսեցի խորհրդի պ. նախագահից նրա նոր նուիրատուութիւնների մասին, որը պատիւ է բերում պ. Աֆրիկեանին և երախտապարտ կացուցանում ազգը ի դիմաց այդ բարեգործ անձի։ Իմ յարգանքս յայտնելով հանդերձ պ. Աֆրիկեանին, այնուամենայնիւ պէտք է ներկաների ուշադրութիւնը դարձնեմ այն հանգամանքի վրա, որ խորհրդի պատճառաբանութիւնները սխալ հիմունքների վրա են դրված, այն է՝ 1) ընդունում եմ, որ պ. Աֆրիկեանը նուիրել է ընկերութեանը 4700 ռուբլի, ինչպէս այդ երևում է Բարեգ. Ընկերութեան անցեալ տարվայ տեղեկագրից. 2) խոստումները՝ շարունակել ապագայում էլ այդչափ գումարի նուէրը՝ քանի որ դրաւոր չէ—անկարելի է հարիւր հազար ռուբլի դրամագլխի տոկոսներ համարել, որովհետև Տ. Աֆրիկեանը իր կամքով կամ իրանից անկախ պատճառներով կարող է և իրաւունք ունի դադարեցնել այդ նուէրները ամեն րոպէ. 3) Բարեգործական Ընկերութիւնից դուրս՝ կողմնակի կատարած բարեգործութիւնները չը պէտք է ընդունել հիմք որևէ մէկին պատուաւոր անդամ ընտրելու, որովհետև այդ հակառակ է կանոնադրութեան 17-դ յօդուածին, որ խմբագրված է սրոշ—«Պատուաւոր անդամներ կարող են ընտրվել Ընկերութեանն առանձին ծառայութիւն ցոյց տուող անձինք»։—Այս բոլորից յետոյ մնում է միայն 4700 ռուբլի նուէրը իբրև ընկերութեան մատուցված առանձին ծառայութիւն։ Ես ընդհանուր ժողովը պէտք է միայն հարցը քննէ, թէ արդեօք այդչափ գումարի նուէրը կարելի է համարել բաւական, իբրև ընկերութեանն առանձին ծառայութիւն մատուցած, և եթէ ժողովը խնդիրը այդ ձևով վճռելու լինի ի նպաստ Տ. Աֆրիկեանի, այն ժամանակ այդ վճիռը կը լինի օրինակ և խրախուսանք, որ ուրիշներն էլ, գուցէ շատերը, կը հետևեն այդ օրինակին»։

«Բայց խորհուրդը, որքան կարելի է եզրակացնել նրա բացատրութիւններից, չէ ընդունում 4700 ռուբլին իբրև բաւական «առանձին ծառայութիւն» համարելու։ Եւ այդ երևում է նրանից, որ, առաջին՝ խորհուրդը այդ գումարի վրա բարձել է իբրև «առանձին ծառայութիւններ» նաև խոստումները և Տ. Աֆրիկեանի Բարեգ. Ընկերութիւնից դուրս կատարած ընդհանուր ազգօգուտ գործերը և երկրորդ՝ որ խորհուրդը չէ առաջարկել ընդհանուր ժողովին իբրև

պատուաւոր անդամ ընդունել նաև Ախալքալաք գիւղի աւագ-քահանայ տէր-Յովհաննէս Տէր-Գալստեանին, որն իր ամբողջ կարողութիւնը կազմող կալուածները—խորհրդից գնահատված 20,000 ռուբլի—նուիրել է Բարեգործական Ընկերութեան։ Խորհուրդը ոչ տեղեկագրի մէջ և ոչ բերանացի չը բացատրեց էլ ընդհանուր ժողովին այն պատճառները, որոնցով ինքը դեկավարվել էր չառաջարկելով այդքարեգործ քահանային պատուաւոր անդամութեան կոչման, որը այն տպաւորութիւնը թողեց, թէ ընտրանքի տուած խոստումներին իսկապէս հարիւր հազար ռուբլի դրամագլխի նշանակութիւն է տալիս, ինչպէս որ խորհրդի պ. նախագահը շեշտեց իր բացատրական ճառում և որը ես համարում եմ սխալ։

Ահա սրանք են եղել իմ յայտնած կարծիքները ամսիս 17-ին՝ Բարեգործ. Ընկեր. ընդհանուր ժողովում և ոչ թէ այն միանգամայն վիրաւորական խօսքերը, որոնք «Գործ» լրագրի արձանագրութեան մէջ ինձ էին վերագրված...։ Ս. Զէրքէզեան

ԲԱՑ ՆԱՄԱԿ

Հայ մամուլի գաւառական բոլոր Թղթակից-աշխատակիցներին

—

Երևան, 7 մայիսի

Ինձ այս բաց նամակը ձեզ ուղղելու վստահութիւնը թելադրում է այն հասունացած խնդիրը, որն իբրև դրական պահանջ մեզ բոլորիս համար խիստ կենսական նշանակութիւն ունի։

Դա գաւառական թղթակից-աշխատակիցների գրական աշխատանքի կանոնաւոր վարձատրութեան խնդիրն է։

Այս հարցը նշանակութիւն ունի ոչ թէ միայն լոկ հօնօրարի բաշխման տեսակէտից, այլ և հէնց այդ մամուլի համար հանդիսանում է մի անխուսափելի ըէֆորմացիա, որը արմատական յեղաշրջումն և բ արերար ազդեցութիւն պիտի գործէ նրա ներկայ քայքայված նիւթական և բարոյական վիճակի վրա։

Մեր պարբերական մամուլը, նրա հետ և գրական գործը, ապրեց և անցաւ իր նախնական պրոցէսսից. դա մի շրջան էր, որին կարելի է անուանել Նազարեան շրջան։

Ծանր, տաղտկալի և յուսահատական էր այդ շրջանը, երբ մեր քաղ, անտարբեր հասարակութիւնը խորասուզված իր չարչիական կօպէկների մէջ, մամուլն ու գրականութիւնը նրա համար մի մեռած, անպէտք բան էր և ոչ մի արժէք չունէր։

Հէնց այդ սկզբնական շրջանից սկսած հայ կեանքում մամուլին ծառայելը դրված է եղել լոկ գաղափարական հողի վրա—այն է, նրան ծառայելու համար, աչքի առաջ պէտք է ունենայիր ոչ թէ նիւթական որևէ շահ, այլ ընդհակառակը, տնտեսական քայքայում, նիւթական կորուստ, հալածանք, աղքատութիւն և ֆիզիկական ու մտաւոր ձրի տառապանքներ։

Վերջին չարքաշութեան մէջ մեռաւ անմահ Ստեփաննոս Նազարեան—հայ հրապարակախօս մամուլի այդ մեծ նախավկան։ Իր կեանքն ու էութիւնը զոհաբերեց Մի-քայէլ Նալբանդեանը մեր մամուլին ձրի ծառայելով և մեռաւ քաղցած ու հիւանդ։ Իր հարիւր հազարանոց կալուածները մամուլին զոհաբերեց Գրիգոր Արծրունին. իր ամբողջ կեանքն ու էնէրգիան, վերջին կօպէկը մամուլի վրա դրին Տիգ. Նազարեան, Ա. Յովհաննիսեան և այլք։ Դեռ չեմ յիշում դրանց հետ հաւասար տանջվող և զոհաբերվող գաւառական Թղթակից-աշխատակիցների չարքաշ զրկանքները։

Սակայն, դա մի յայտնի շրջան էր, երբ այդ խոշոր զոհաբերութիւնների վրա պիտի կանգնէր և կեանք առնէր մամուլն ու գրականութիւնը մեր ամուլ իրականութեան մէջ։

Ի՞նչպէս կարելի է մոռացութեան տալ հայ ժողովրդի այն բնական, յատուկ գիծը, որ ցայսօր էլ դեռ շարունակում է իր հետքերը։

Դա այն ծանր բուժելի հիւանդութիւնն է, որ միշտ խուսափում է գրական կեանքից ու մամուլից։ Նա չէ հետաքրքրվում մամուլով, նա սովոր է փող չը տալ լրագրի և ձեռք բերել նոյն իսկ աննրելի միջոցներով, որից միշտ տուժել և չարքաշ դրութիւն է ունեցել մեր գրականութիւնը։

Եւ, դրա համար էլ, ստիպված էին մեր մամուլի նախակարապետները անհուն զոհաբերութիւններով ստեղծել մամուլ և տալ այդ ժողովրդին ասելով. «Առ, մանուկ, ճաշակիր այս մեղրը, տես, որքան քաղցր է»։ Դրանով պիտի զարգացնէին նրա ճաշակը և մամուլը դարձնելու նրա համար մի անհրաժեշտ պահանջ։

Այժմ մամուլը պահանջ է դարձած մեր հասարակութեան համար։ Անցել է Նազարեան շրջանը և թեակոխել մի ուրիշ փազի մէջ։ Այժմ նա խմորվել է մեր առօրեայ կեանքի բոլոր պահանջների հետ։ Նա մի անխուսափելի անհրաժեշտութիւն է և մի յենակէտ մեր մտաւոր ներկայ պահանջներին, նոյնը և նշանակութիւն ունի նրա տնտեսական, արդիւնաբերական, վաճառականական, հասարակական ու քաղաքական բոլոր շրջանառութիւնների համար։ Մամուլը կենսական պահանջ է նոյնիսկ այն չափով, ինչ չափով որ հացի պահանջն է հանդիսանում։ Եւ մեր հասարակութիւնը նոյնիսկ չէ կարողանում մի օր առանց լրագրի մնալ, և դրա համար պահանջ է դնում հրատարակել այն նոյն իսկ կիրակի օրերը։

Եւ հէնց այստեղից էլ ծագում է այս խնդիրը, որ մամուլը իր պահանջի հաւասարակշռութեամբ պէտք է նիւթապէս վարձատրվի և վարձատրէ այն բոլոր գրական աշխատակիցներին, որոնք դեռ ևս ծառայում են նրան Նազարեան շրջանի պայմաններով։

Կեղծ կը լինի ասել, թէ մամուլը նիւթապէս չէ վարձատրվում. նրա դեկավարների կողմից ամենամեծ շահագործութիւն է այժմ դատապարտել գաւառական աշխատակցին ձրի ծառայութեան, որովհետև դա նրա կողմից մի վաշխառութիւն է, երբ իր ստացածից բաժին չէ հանում իր լծակից ընկերոջ։

Սակայն եթէ ճիշդ էլ լինի նրա առարկութիւնը նիւթականի նկատմամբ, մենք դրան կը պատասխանենք, որ նրանք չը նայելով մամուլի ներկայ արժէքին, նրա նիւթական կարգերը տակաւին գտնում են Նազարեան շրջանի համաձայն, որ, այդ մամուլը հիմնված աշխատակիցների ձրի կոռուրութեան վրա, լրագիրը դարձրել են անարժէք, փողոց ընկած մի էժան ապրանք։

Եւ հէնց այս նկատմամբ էլ մեր պարբերական մամուլի պարոն դեկավարներին գալիս ենք ասելու, որ երբ փոխվել է մամուլի նշանակութիւնը Նազարեան շրջանից պահանջի նկատմամբ, նրա նիւթական պայմաններն էլ պէտք է փոխվեն դարձեալ նոյն շրջանի հնացած և անպէտքացած կարգերից։

Դուք կառարկէք, թէ դրանով մեր մամուլը կը քայքայվի և կիջնի հրապարակից, բայց մենք կասենք, որ տապալելով այդ հնացած հիմքերի վրա դրված հնացած մամուլը, նոր հիմքերի վրա առաջ կը բերենք նորը և աւելի նպատակայարմարը։

Պահանջը կը ստեղծէ իր անհրաժեշտութիւնը, քանի որ մամուլը առօրեայ կարիք է հասարակութեան համար։

Հօնօրարի խնդիրը հանդիսանում է մեր մամուլի համար հետևեալ վերանորոգիչ ըէֆորմացիան.

1) Ամեն մի դատարկաձեռն անհատ խմբագրի պաշտօնով չի հրապարակ գալ և, յոյսը դրած ձրիակերութեան վրա, էժան և անպէտք դարձնելու մամուլը։

2) Վճարելով Թղթակից-աշխատակցի ամեն մի տողին, թերթը չի դառնայ արտադրութիւն պատահական Թղթակիցների, պատահական ազատ ժամերի, իբրև մի աւելորդ և անպէտք գրականութիւն։

3) Հօնօրարը հիմք կը դնի գաւառական կեանքում պրոֆեսիոնալ գրողների առաջ գալուն, որոնք ստանալով ապրուստի միջոց իրանց մտաւոր աշխատութիւնից, իբրև կենսական արուեստ, կը սկսեն պարապել միմիայն դրանով, զարգացնելով իրանց պրոֆեսիան, ուսումնասիրելով ժողովրդի կեանքն ու պահանջները։ Այդ չափով էլ կը բարձրանայ ներկայ շարլօնական հետաքրքրական մամուլի մտաւոր կողմը։

4) Անընդհատ զոհաբերութիւններից յուսահատված և միմիայն հաւատքիտ դէպքերում գրիչ վերցնող մեր ընդունակ ոյժերը հանդէս կը գան առանձին էներգիայով և գաւառական կեանքի խաւար մակերևոյթից կը ստեղծվեն գրական աստղեր, զարկ տալով տպագրական խօսքին։ Հօնօրարը գէթ կը փոխարինէ նրանց այն թշուառ, հալածական կեանքին, որոնց նա ենթարկվում է իր հարուածող գրչով։

Ահա այս առիթով մի քանի գաւառական աշխատակիցների նամակների փոխանակութիւնից յետոյ, որոշեցինք նախ՝

1) Մամուլի մէջ հրապարակ հանել այս լուութեան մատնված խնդիրը և դնել քննութեան առաջ։

2) Ստեղծել Թիֆլիսում գաւառական գրական աշխատակիցների մի կօնֆէդէրացիայի հնարաւորութիւն, որը խիստ անհրաժեշտութիւն է ներկայացնում նախ՝ հօնօրարի խնդրի լուծման տեսակէտից, երկրորդ՝ մամուլի նիւթական ապահովութեան և տարածման և երրորդ՝ գրական աշխատակիցների ապագայ գործունէութեան։ Մաքերի այդպիսի փոխանակութիւն խիստ նշանակալից կը լինի նրանց գրական գործունէութեան համար։

Կարծում եմ, որ լուութեան չի մատնվի այս խնդիրը գրական աշխատանքի նուիրած դասի կողմից և ըստ արժանոյն հրապարակ կը դրվի այն։

Մուշեղ Բագրատունի

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՊԱՐՏԱԴԻՐ ԶԻՆՈՐԱԿՈԶՈՒԹԻՒՆԸ ԹՈՒՐՔԻՍՏԱՆՈՒՄ

—

«Рус. Вѣд.»-ի Սիբիրյի Սպիտակ-Արաբ ծանօթ թղթակիցը ի միջի այլոց գրում է. «Նոր թագաւորութիւնը իր հետ բերում է քրիստոնեաների համար նոր դեր—զինուորի դերը։ Դրա մասին շատ եռանդուն կերպով աշխատում են Կ. Պօլսի հայերը՝ պատճառաբանելով գլխաւորապէս նրանով, որ հայերը աղքատ են, ուրեմն նրանց համար ծանր է տուրքի վճարումը։ Իսկ Սիբիրյի քրիստոնեաները—արաբները, որքան ես գիտեմ, հակառակ կարծիքի են. նրանց չէ գրաւում արդի զինուորականութիւնը և պատրաստ են ճշդօրէն հարկը վճարելու, ի հարկէ օրինական չափով, միայն թէ իրանց որդկերանց ազատեն այդ պարտականութիւնից։ Սիբիրյի արաբները գերադասում են խաղաղ աշխատանքը և ընտանեկան օջախը՝ պատերազմին և զօրանոցային կեանքին։ Ենթադրում են, որ պարտադիր զինուորակոչութիւնը կը ճանաչէ «բադալ» (փոխարէն) սկզբունքը. զինուոր գնալուց հրաժարվողը «փոխարէնը» կը տայ գանձարանին 25 ռսկի՝ միանուագ։ Դա շատ ցանկալի կը լինէր (արաբների համար ?), քանի որ պարտադիր զինուորակոչութիւնը միայն կը նպաստէ Ամերիկա գաղթելուն։ Արդէն այժմից շատ ծնողներ գրում են իրանց Ամերիկա գտնվող զաւակներին չը վերադառնալ հայրենիք, մինչև որ պարզվի «փոխարէնի» հարցը»։

Մեր կարծիքով կայ երկու սկզբունք արդի զինուորակոչութեան մէջ, մի կողմ թողնելով ժողովրդական միլիցիայի ցանկալի pia desidera-ն՝—կամ կամաւոր զինուորագրութիւն՝ դրամական բաւարար վարձատրութեամբ (օր. Անգլիան) կամ ընդհանուր պարտադիր զինուորակոչութիւն ըստ կարելոյն ծառայութեան ժամանակամիջոցով, որից ազատ կարող են մնալ հիւանդները, ընտանեկան խիստ յարգելի պատճառներ ունեցողները կամ այն կրօնների հաւատակիցները, որոնք բացարձակապէս հակառակ են զինուոր տալու սկզբունքին։ Եւ վերջիններս, Ռուսաստանի մենօնիտների նման, եթէ փոխարէն զինուոր գնալու՝ կատարեն այլ պետական պարտադիր ծառայութիւններ։

«Բադալը» յիշեցնում է ճորտատիրական Ռուսաստանի ըէկրուտային վկայաթղթերը, որ միայն ձեռք էին բերում ունևոր անձինք։ Ո՞վ չէ գերադասել «խաղաղ աշխատանքը, ընտանեկան օճախը՝ զօրանոցային կեանքից»։ Բայց տալ այդ արտօնութիւնը ունևորներին՝ կը նշանակէ մացնել հակաժողովրդական մի սկզբունք ևս։ Թող «զօրանոցային կեանքի» պարտադիր ենթարկումը ինքնաբերաբար առաջ մղէ միլիցիայի փրկարար գաղափարը, իսկ իրար կողքի ծառայող բաղմազան ազգերի զաւակները «զօրանոցային կեանքով» մօտենան իրար և անեն ընդհանուր հայրենիքի գաղափարը։

Այլ բան է զինուորակոչութիւնից վիճակի ժամանակ ազատվածներին հարկի ենթարկելու խնդիրը։ Դա ունի շատ կողմնակիցներ և արդէն գործադրվում է մի քանի երկիրներում (օրինակ Աւստրիայում և մտադրվում է Ռուսաստանում)։ Այն էլ նկատենք, որ դա իրագործել կարող են հարուստ երկիրներ և հազիւ թէ նպատակայարմար լինի Թիւրքիայի աղքատ շինքին կապել մի նոր հարկ ևս։

Պետրոս Զաքարեան

ՔԱՂՈՒԱԾՔՆԵՐ ԱՐՏԱՍԱՀՄԱՆԻ ՀԱՅ ԹԵՐԹԵՐԻՑ

—

Աղանայի կոտորածի շուրջը.—Թիւրքական ներքին գործերի մինիստր Ֆէրիդ փաշան իր մօտ է հրաւիրել հայոց պատրիարքական տեղապահին և յայտնել, որ Աղանայի կոտորածի հեղինակներին երևան հանելու և այդ առիթով անհրաժեշտ քննութիւններով զբաղվելու համար՝ կառավարութիւնն էլ իր կողմից մի յանձնաժողով է ուղարկելու Աղանա։ Այդ յանձնաժողովի հայ անդամ նշանակված է Յարութիւն Մոսմիչեանը, որի մասին Ֆէրիդ փաշան հարցրել է տեղապահին, թէ սա ինչ կարծիք ունի Մոսմիչեանի նշանակման մասին։ Ներքին գործերի մինիստրն ասել է, թէ ցանկալի էր, որ պատրիարքարանն էլ իր կողմից պարլամենտի մի անդամի որոշէր՝ ուղարկվելիք յիշեալ յանձնաժողովին ընկերանալու համար։

«New York Herald» թերթի պարիզեան հրատարակութեան մէջ Տարսոնի ամերիկեան կոլէջի պրոֆ. Ադամս Գիբբընս մանրամասնօրէն նկարագրում է Աղանայի ջարդերը, որոնց ինքն ականատես է եղել։ Ասում է, թէ ապր. 3-ին փողոցներն ուղղակի սպանդանոցի էին վերածվել։ Շները դիակներ էին ուտում։ Ոչ միայն տղամարդիկ էին կոտորվում, այլ և կանայք ու երեխաներ, որոնց չը խնայեցին զինուորները գնդակահարել, երբ այդ եղելիները ապատան էին որոնում բամբակի գործարանները։ Թիւրքերն ամենայն սատանայութեամբ սպանեցին ամերիկացի միսիոնարներ Բօջըրսին և Մաուրըրին։ Մարդասպաններն աղաղակում էին. «Թիւրքիան թիւրքերի համար. թող սատակեն գեաւուրները»։ Այն երկու վաշտ զինուորները, որոնք Աղանա էին ուղարկված, անզօրութիւնը հաստատվելուց յետոյ կրկնել են ջարդերը և թալանել ամեն ինչ՝ ի հաշիւ իրանց անձնական գրպանի։

Ալէքսանդրիայից հաղորդվում է, թէ Ադանայի երկրորդ կոտորածը կատարված է 4,000 զինուորների կողմից, որոնք մնացեալը կրակի տուել ու քարուքանդ են արել, ինչպէս և շատ հայերի կոտորել։ Կարծվում է, որ դրանք այն զինուորներն են, որոնք Դէդէ-Աղաջից ուղարկվել էին հայերին պաշտպանելու համար։

ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ՀԵՌԱԳ. ԳՈՐԾ.

20 մայիսի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Խօլերան ըստ երևոյթին թուլանում է։

Այսօր Թագաւոր Կայսրին ներկայացաւ մի պատգամաւորութիւն Հիւսիս-Արևմուտեան և Հարաւ-Արևմտեան երկրի 9 նահանգների ռուս ազգաբնակութեան կողմից։ Կայսրը բարեհաճեց դիմել պատգամաւորութեան հետևեալ ողորմած խօսքերով։ «Ես ուրախ եմ, որ այսօր ընդունում եմ ձեզ։ Շնորհակալ եմ անկեղծօրէն և յանձին ձեր երկրի ամբողջ ազգաբնակութեանը՝ նրա անկեղծ սիրոյ և Գահին ու Ծանգազին հայրենիքին նուիրված լինելուն համար։ Ես ամեն ջանք և Ինձանից կախված միջոցները կը գործադրեմ ձեր միջնորդութեանը բաւարարութիւն տալու համար»։

Մայիսի 23-ին հանդիսաւորութեամբ կը բացվի Ալէքսանդր III կայսրի արձանը որոշված կարգով։

Թագաւոր Կայսրը բարձրագոյնս կարգադրել բարեհաճեց Վլադիվոստոկի նաւահանգստի կառավարչին ենթարկել Խաղաղ Ովկեանոսի ծովային ոյժերի հրամանատարին։

ՍԱՐՍԱՏՕՎ։ Երևանի շրջանում ուժեղ հեղեղը կարկտի հետ ոչնչացրեց ցանքերը։

ԻՐԿՈՒՏՍԿ։ Զինուորական դատարանում սկսվեց անդրբայկալեան երկաթուղային 1905 թ. գործադուլի գործի քննութիւնը։ 55 մեղադրվողներից ներկայ են միայն 24-ը։

ՆՕՎԳՈՐՕԴ։ Բացվեց բժշկական սեզօնը Սառի Ռուսում։

ԼԻՊԷՑԿ։ Բացվեց բժշկական սեզօնը։

ՄԱԴՐԻԴ։ Ալֆոնս Թագաւորը խաղի ժամանակ վայր ընկաւ ձիու հետ միասին և թեթև ջարդեց մի ոտը։

ՍՏՕԿՀՕԼՄ։ Լրագիրները հաղորդում են, որ շվեդացի ինժենէրներ Էգնէր և Գօլմէրտմը երկար աշխատանքներից յետոյ հնարել են մի այնպիսի զայրուն միկրոֆոն, որ հեռախօսով կարելի է կրկնակի ամենահեռու տարածութեան վրա խօսել, քան թէ այժմս է։

ՍՕՖԻԱ։ Արևելեան երկաթուղագծերի վերաբերութեամբ բուլգարական նօտայի մէջ, որ կազմված է ամենաչափաւոր դարձուածքներով և ուղարկված Բ. Դրան այս մայիսի 19-ին, բողոք է յայտնվում քննութիւնը դանդաղեցնելու դէմ։ Նօտայում բացի այդ ասվում է, որ բուլգարական կառավարութիւնը դիմեց ռուսաց կառավարութեան, խնդրելով հանդէս չը գալ Պետերբուրգի ռուս-թիւրքական համաձայնութեան ոյժով, մինչև որ Բ. Դուռը համաձայնութիւն կը կապէ արևելեան երկաթուղային վարչութեան հետ։ Այդ պատճառով այստեղի հեղինակաւոր շրջանները սպասում են, որ Բ. Դուռը շուտով համաձայնութեան կը գայ վարչութեան հետ։

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ Ա. ՔԱԼԱՆԹԱՐ
Յ. ՏԷՐ-ՄԱՐԿՈՍԵԱՆ
Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆ

ՏԵՂԵԿԱՏՈՒ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ ԲԺՇԿԱՊԵՏ Բ. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆԻ

Հիմնված 1880 թ.

(Կուկիա, Զօրանոցվի արձանի հանդէպ)

Ամեն օր, բացի կիրակի օրերից

ԱՌԱՒՕՏՆԵՐԸ՝

Բ. Ա. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վիրաբուժութեան և վեներական (սիֆիլիս) հ.։

Կ. Մ. ՋԻԿՕՎԱՆԻ—9½—10 ժ. աչքի, ներքին և նեարդային։

Զ. Ի. ԲԱԲԱՆԱՍԵԱՆ—10—11 ժ. մանկաբարձութեան, կանանց և երեխայոց հ.։

Ն. Տ. ՄՈՒՀԻՆ—10—12 ժ. ականջի, կոկորդի և քթի հիւ.։

Մ. Դ. ԱՒԵՏԻՍԵԱՆ—11—12 ժ. մորթու, վեներակ., վիրաբուժութեան և միզասեռ.

Ա. Մ. ՓՈՒՂԻՆՕՎ—12—1 ժ. ներքին և երեխայոց հիւ. և ծաղկահատ.։

Օ. Վ. ԴԵՅԵՎՍԿԱՅԱ-ԷՆԴԵԼ—12—1 ժ. մանկաբարձ., կանանց և երեխայոց հ.

Ա. Գ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆ—1—1½ ժ. ներքին և երեխայոց հիւ.։

ԿԻՆ-ԲԺԻՇԿ Ա. Մ. ՏՈՒՐԲՕՎԻՉ—1½—2 ժ. մանկաբարձութեան։

ԵՐԵԿՈՆԵՐԸ՝

Օ. Վ. ԴԵՅԵՎՍԿԱՅԱ-ԷՆԴԵԼ—6—6½ ժ. մանկաբարձ., կանանց և երեխայոց հ.։

Ի. Ֆ. ՄԱՐՅԻՇԵՎՍԿԻ—6—7 ժ. ներքին և երեխայոց հիւ. և ծաղկահատ.։

Վճարը 50 կ.։ Զբաւորները ձրի։ Համախորհրդի (կոնսիլիումի) և օպերացիայի համար առանձին։

Հիւանդանոցի վերատեսուչ՝
Բժշկապետ Բ. Նաւասարդեան

ԸՆԴԻՐԿՈՎԿԱՍԵԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻ

Ամարային երթևեկութիւն

(Թիֆլիսի ժամանակով)

Թիֆլիսից մեկնում է

ԲԱԴՈՒ՝ ՊՕՍՏԱՏԱՐ գնացքը 11 ժ. 38 ր. երեկ., Գանձակ է հասնում 6 ժ. 1 ր. առ., Եւլախ՝ 7 ժ. 58 ր. առ., Հաջի-Կաբուլ 1 ժ. 12 ր. ցերեկ., Բալաջարի 4 ժ. 43 ր., Բագու՝ 6 ժ. 7 ր. երեկ.։ ՄԱՐԴԱՏԱՐ ԳՆԱՑՔ № 6՝ 7 ժ. 36 ր. առ., Գանձակ է հասնում 1 ժ. 41 ր. ցերեկ., Եւլախ՝ 3 ժ. 36 ր. ցերեկ., Հաջի-Կաբուլ՝ 8 ժ. 15 ր. երեկ., Բալաջարի՝ 11 ժ. 37 ր. գիշ., Բագու՝ 12 ժ. 44 ր. գիշ.։ ՄԱՐԴԱՏԱՐ ԳՆԱՑՔ № 12՝ 10 ժ. 11 ր. երեկ., Գանձակ՝ 4 ժ. 13 ր. առ., Եւլախ՝ 6 ժ. 8 ր. առ., Հաջի-Կաբուլ՝ 10 ժ. 32 ր. Բալաջարի՝ 1 ժ. 44 ր. ցերեկ., Բագու՝ 2 ժ. 18 ցերեկ.։

ԶՈՒԼՖԱ-ԵՐԵՒԱՆ, պօստատար 1 ժ. 44 ր. գիշեր., Ալէքսանդրօպոլ հասնում 12 ժ. 35 ցերեկ., Ուլուխանլու՝ 6 ժ. 11 ր. առ., Զուլֆա՝ 1 ժ. 10 ր. գիշեր.։ ՄԱՐԴԱՏԱՐԱԳՐԱՆՔ. 5 ժ. երեկ., Ալէքսանդրօպոլ հասնում 3 ժ. 38 ր. առաւ., Ուլուխանլու՝ 9 ժ. 12 ր. առաւ., Երևան՝ 10 ժ. 7 ր. առ.։

ԲԱԹՈՒՄ՝ ԱՐԱԳ. ԳՆԱՑՔ 8 ժ. 31 ր. երեկ., Բաթում է հասնում 7 ժ. 41 ր. առ.։ ՊՕՍՏԱՏԱՐ՝ 9 ժ. 4 ր. երեկ., Բաթում է հասնում 10 ժ. 33 ր. առ.։ ՄԱՐԴԱՏԱՐ՝ 1 ժ. 1 ր. ցերեկ., Բաթում է հասնում 2 ժ. 34 ր. ցերեկ.։

Թիֆլիս է հասնում

ԲԱԴՈՒԻՑ՝ ՊՕՍՏԱՏ. ԳՆԱՑՔԸ 8 ժ. 6 ր. երեկ. ՄԱՐԴԱՏԱՐ № 5՝ 12 ժ. 11 ր. ցերեկ., ՄԱՐԴԱՏԱՐ № 11՝ 10 ժ. 45 ր. առ.։

ԲԱԹՈՒՄԻՑ՝ ԱՐԱԳ. 9 ժ. 36 ր. առ., ՊՕՍՏ. 10 ժ. 38 ր. առ. ՄԱՐԴԱՏԱՐ՝ 8 ժ. 42 ր. առ.։

ԶՈՒԼՖԱՅԻՑ-ԵՐԵՒԱՆ՝ ՊՕՍՏ. 6 ժ. 26 ր. երեկ. ՄԱՐԴԱՏԱՐ-ԱՊՐԱՆՔ. 6 ժ. 27 ր. ցերեկ.։

ԲԺԻՇԿ
Ա. Մ. ԱՄԻՐԽԱՆԵԱՆ
Ներքին հիւանդութիւններ
Ընդունելութիւն ամեն օր { 11—12 ժ. առաւ. / 5—6 ժ. երեկ.
Վելիամինովսկայա փող., № 10.
(օ. մ.) 100—87

ԲԺԻՇԿ
Ա. ԽԱՆԴԱՄԻՐԵԱՆ
Վերադառնալով՝ վերսկսել է հիւանդների ընդունելութիւնը։
Ներքին և ջղային հիւանդութիւններ։
Առանձնապէս՝ սրտի և թոքերի։
Ընդունելութիւնը՝ { առաւօտեան ժ. 10—12-ը. / երեկոյեան ժ. 5—6-ը.
Սօլոլակսկայա փող., № 6, տ. Միրզոյեվի։
(օ. մ.) 344. 100—67

ՑԱՑՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՀԱԳՈՒՍՏԻ ՀԱՄԱՐ!
Տղամարդկանց հագուստի համար կտորեղէնների շրջանում եղած նորութիւնը «Շեվիօտ Գօլուբ» կտորն է։ Այնպիսի մի էժան գնով՝ այն է 5 ր. 25 կ., լաւ տեսակինը 6 ր. 25 կ., տղամարդկանց ամբողջ կօստիումի համար, 4¼ արշին, կտորը ոչնչով չէ զանազանվում արշինը 5—6 ր. արժեցող նոյնատեսակ կտորից և ունի նրա բոլոր յատկութիւնները, այն է՝ դիմացկունութիւն, գոյնի կանոնաւորութիւն և շքեղութիւն։ Գոյները՝ սև-մուգ, կապույտ, շագանակագոյն, ողորկ-ձիթագոյն, կամ թէ նոյն գոյները՝ բծերով։ Ուղարկվում է պօստով, վերադիր վճարով և առանց կանխավճարի։ Երեք կամ աւելի կտոր պատուիրելուց՝ իւրաքանչիւր կտորին ձրիաբար կցվում է հարկաւոր քանակութեան աստառացու։ Առանց բիակի, լրիւ երաշխաւորութիւն, եթէ կտորը չը հաւանվի՝ յետ է վերցվում։ Գանձումները խնդրում եմ հասցէագրել՝
Въ фабрику шерстяныхъ издѣлій
ЗИГМУНТА РОЗЕНТАЛЯ г. Лодзь № 15. Д.
Թղթակցութիւնները ռուսերէն լեզուով։
(В. 29631) 377. 1—1

ԼՈՑՏ ՏԵՍԱՒ
Վ. ՓԱՓԱԶԵԱՆ
„ՄԵՈՒԵԼ“
(Պատմուածք)
50 երես, գինն է 15 կօպ.։ Գիրքը ապված է լաւ թղթի վրա, գեղեցիկ շապիկով։
Դիմել՝ Тифлисъ, книж. магазинъ „Гуттенбергъ“ Г. И. Галустяну.
(օ.մ.) 466. 4—1

Կիէվի աղջկանց գիմնազիան աւարտած
ՄԻ ԼԵՀՈՒՀԻ
ՕՐԻՈՐԴ
ցանկանում է ունենալ դասեր սենեակի և ճաշի փոխարէն, ամարանոցում, հայախօս ընտանիքում։ Հասցէն՝ угол Аршакуньевскаго пер. и Грибоѣдовск. ул., № 31, кв. 5.
Завада. ժամը 11-ից մինչև 3-ը ցերեկվայ։
(ու. կ.) 461. 2—1

ԵԻԼԱԽ—ՇՈՒՇԻ
Թագաւորական պօստային ճանապարհի կայարանատէրերը յայտնում են հասարակութեան, որ իրանք՝ աւելացնելով պօստային ձիերի և կայարանների թիւը՝ մայիսի 1-ից նոր եւ մեծ յարմարութիւններ են ստեղծել Շուշի ամարանոց գնացողների համար,
որպէսզի վերջիններս կարելոյն չափ կարողանան գնալ Շուշի հեշտ և արագ կերպով։ Ընդունվում են՝ հեռագրով կամ նամակներով՝ յանձնարարութիւններ վեց, ութ և տասը տեղանի դիլիժանների, երկու և չորս տեղանի կօլեասկանների և ֆայէտօնների համար, որոնք պատրաստ կերպով իսկոյն կը տրվին Եւլախ ժամանողներին, երկաթուղային գնացքը կայարան հասած րօպէին։ Գները՝ դիլիժանների համար՝ 4 և 5 ռուբլի, 1 պուդ ձրի բօգաժով (աւելիի համար կը ստացվի իւրաքանչիւր պուդից 70 կօպ.)։ Միւս կառքերն արժեն 15 ռուբլուց մինչև 25 ռուբլի՝ ճանապարհորդների իրերով, որքան կարելի կը լինի տեղաւորել։ Կայարանները խիստ մաքուր են և ծառայողները քաղաքավարի։ Հանգստանալու կամ գիշերելու համար ցանկացողներին տրվում են ձրի սենեակներ։ Ուղարկված յանձնարարութիւնները պարտաւորական են անողների համար։ Հասցէն՝ Евлахъ, Завѣдывающему станціею.
406. 7—7
(չ. ու. կ.)